

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հայաստան-Ֆրանսա Պատմական Համաձայնություն

Հայաստանի եւ Ֆրանսայի միջեւ ստորագրուեցաւ ռազմական համաձայնութիւն, որ կարելի է կոչել եզակի իր ձեւին ու բովանդակութեան մէջ: Քիչ անգամ կը պատահի որ, երկու երկիրներ պաշտօնական համաձայնագիր ստորագրեն զէնքի վաճառքի շուրջ: Ընդհանրապէս նման գործարքներ տեղի կ'ունենան գաղտնիութեան շղարշին տակ՝ հակառակորդ կողմերուն առաւելութիւն չտալու եւ այլ երկիրներու հետ յարաբերութիւնները չբարդացնելու համար: Այս պարագային սակայն, Ֆրանսական կողմի նախաձեռնութեամբ ամէն ինչ կը կատարուի բաց երկնքի տակ՝ մի քանի ուղղութիւններով պատգամներ ուղարկելու նպատակով:

Բնականաբար առաջին պատգամը ուղղուած է Պաքուին՝ հասկցնելու համար որ, երբ հարցը կը վերաբերի Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքին Ֆրանսան ու անոր ետեւէն եւրոպայն վճռած են պաշտպանելու ժողովրդավար երկրի մը հողային ամբողջականութիւնը, ընդդէմ բռնապետական վարչակարգի մը կողմէ հնչող սպառնալիքներուն: Պատգամ կ'ուղղուի նաեւ Ռուսաստանին՝ հասկցնելու համար որ, Հարաւային Կովկասը իր միանձնեայ ազդեցութեան տակ չէ այլեւս եւ այլ դերակատարներ կան, որոնք պատրաստ են աջակցելու տարածաշրջանէն ներս կայունութեան հաստատման:

Ֆրանսան միակ երկիրը չէ, ուր Հայաստանի պաշտպանութիւնը դարձած է օրակարգի հարց: Անցեալ շաբաթ, Հոլանտայի խորհրդարանը որոշում կայացուց, որով կոչ կ'ընէ կառավարութեան դրական արձագանգելու Հայաստանին սպառնալիքներուն օգնութիւն տրամադրելու խնդրանքին: Անակնկալ պիտի չըլլայ եթէ եւրոպական այլ երկիրներ եւս հետեւին Ֆրանսայի օրինակին:

Այս մօտեցումը թափ առաւ երբ Ատրայէճան անտեսելով Արեւմտեան երկիրներու կոչերուն՝ յարձակում գործեց Լեռնային Ղարաբաղի վրայ՝ ստիպելով Արցախահայութեան գանգուածային հեռանալու իրենց հայրենիքէն:

44-օրեայ պատերազմէն անմիջապէս ետք, Հայաստանի իշխանութիւնները ձեռնամուխ եղան բանակի վերակազմաւորման եւ

Ստորագրուեցաւ Ֆրանսայի Կողմէ Հայաստանին Վաճառուելիք Զինատեսակներու Համաձայնագիր

Փարիզ կատարած աշխատանքային այցի ընթացքին ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան հանդիպում ունեցաւ Ֆրանսայի զինուած ուժերու նախարար Սեպասթիեն Լըքորնիւի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուած են պաշտպանութեան բնագաւառին մէջ հայ-ֆրանսական համագործակցութեան, նաեւ տարածաշրջանային անվտանգութեան առնչուող հարցեր:

Այնուհետեւ Ֆրանսայի Զինուած Ուժերու Նախարարութեան մէջ տեղի ունեցած է երկկողմ համագործակցութեան մասին փաստաթուղթերու ստորագրում:

Ֆրանսան մտադիր է օգնելու Հայաստանին՝ բարելաւելու իր հակաօդային պաշտպանութիւնը՝ վաճառելով երեք ռատար եւ պայմանագիր կնքելով «Միսթրալ» զենիթահրթիռային համակարգերու ապագայ մատակարարման վերաբերեալ:

«Երկիրները պաշտպանելը միանգամայն կարեւոր բան է», Փարիզի մէջ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ ըսած է Լեքորնիւն:



Ֆրանսայի եւ Հայաստանի պաշտպանութեան նախարարները կը ստորագրեն համագործակցութեան մասին փաստաթուղթերը

Նախարարները պայմանագիր ստորագրած են «Thales»-ի արտադրութեան երեք «GM 200» ռատարի վաճառքի մասին, որոնք Ֆրանսան տրամադրած է նաեւ Ուքրանիոյ, ինչպէս նաեւ՝ փոխմբռնման յուշագիր ֆրանսական «Միսթրալ» փոքր հեռահարութեան հակաօդային պաշտպանութեան համակարգի ապագայ մատակարարման վերաբերեալ:

Ֆրանսան նաեւ պիտի օգնէ Հայաստանին վերապատրաստելու ցամաքային պաշտպանութեան ուժերը եւ պիտի աջակցի երկրի ջանքերուն՝ բարեփոխելու եւ արդիականացնելու իր բանակը, ըսած է Լեքորնիւն:

Այն աւելի վաղ չափանաւ էր, որ Երեւանն ու Փարիզը համաձայնագիր պիտի ստորագրեն ռազմական մատակարարումներու վերաբերեալ:

ԱՄՆ-ն ու ԵՄ-ն Յանձնառու Կը Մնան Հայաստանի Ու Ատրայէճանի Միջեւ Խաղաղութեան Հաստատման



Սպիտակ Տան Մէջ կայացած՝ Եւրոպական ԱՄՆ գագաթի ժողովը նախագահ Պայտըրի մասնակցութեամբ

ԱՄՆ նախագահ ձօ Պայտըն, Ուրբաթ օր, Սպիտակ տան մէջ ընդունած է Եւրոմիութեան առաջնորդները՝ Եւրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշէլը եւ Եւրոյան ձեռնարկի նախագահ Ուրսուլա Վոն Լեյենը:

ԱՄՆ-ԵՄ գագաթաժողովի մասին համատեղ յայտարարութեան մէջ նշուած է, որ նախկինին պէս յանձնառու կը մնան՝ յառաջ մղելու Հայաստանի եւ Ատրայէճանի միջեւ կայուն խաղաղութիւն հաստատելու գործընթացը՝ հիմնուած միմեանց ինքնիշխանութիւնը, սահմաններու անձեռնմխելիութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը փոխադարձաբար ճանչնալու վրայ:

Ատրայէճանին կոչ եղած է ապահովելու Լեռնային Ղարաբաղի մէջ մնացած կամ իրենց տունները վերադառնալու ցանկութիւն ունեցող մարդոց իրաւունքներն ու անվտանգութիւնը: Բոլոր կողմերուն կոչ եղած է ձեռնպահ մնալու

Հարաւային Կովկասը Խաղաղութեան Կարիք Ունի Եւ Անոր Աջակցիլ Իմ Հիմնական Քաղաքական Պարտաւորութիւնս Է Նիկոլ Փաշինեան

Հարաւային Կովկասը խաղաղութեան կարիք ունի, այսինքն՝ կարգավիճակ, ուր տարածաշրջանի բոլոր երկիրները կ'ապրին բաց սահմաններով, կապուած են տնտեսական, քաղաքական, մշակութային կապերով եւ բոլոր հարցերը դիւանագիտական ճանապարհով եւ երկխօսութեամբ լուծելու աւանդույթով: Սա իմ հիմնական ուղերձն է, որ փոխանցած եմ Եւրոխորհրդարանին:

Այս մասին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան գրած է «Թուիթթեր»-ի իր էջով:

«Յատկապէս ուզում եմ ընդգծել, որ մենք ոչ մի կերպ չենք հակադրում խաղաղութեան մասին մեր պատկերացումները մեր տարածաշրջանի շահերին, քանի որ մեր երկիրը կարող է խաղաղ ապրել, եթէ տարածաշրջանում խաղաղութիւն տիրի: Եւ ես տեսնում եմ, որ աջակցութիւնը խաղաղութեան ամրապնդմանը իմ հիմնական քաղաքական պարտաւորութիւնն է», գրած է Փաշինեան:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Պէտք է Չեղեալ Յայտարարել ԼՂՀ Լուծարման Մասին Հրամանագիրը

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՕՂՈՍԵԱՆ

Սեպտեմբերի 19-20-ին Արցախի վրայ Ատրպէյջանի յարձակումից եւ դրան յաջորդած՝ հայ բնակչութեան էթնիկ գտումից յետոյ Հայաստանում շատերը ակտիւ մասնակցում են մասնաւոր տարբեր նախաձեռնութիւնների՝ աջակցելու բռնի տեղահանումներին, բայց բոլորը հասկանում են, որ դա յաւերժ չի շարունակուելու: Մի քանի ամիս անց շատերը կը վերադառնան իրենց առօրեայ խնդիրներին, եւ քչերը կը շարունակեն աջակցել բռնի տեղահանումներին, ինչպէս դա եղաւ 2020-ի պատերազմի պատճառով Շուշիից եւ Հադրութից բռնի տեղահանումներին ղեկավարող:

Յաւոք, գրեթէ չկան բանավէճեր ու քննարկումներ այն մասին, թէ ինչ պէտք է արուեստի հիմա, երբ Ատրպէյջանը ուժով վերջ տուեց Արցախի Հանրապետութեան գոյութեանը: Առկայ է երկու հիմնական ուղի: Առաջինը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանումների մարդասիրական խնդիրների վրայ կեդրոնանալն է՝ ձգտելով նրանց գոնէ մի մասին պահել Հայաստանում եւ մոռանալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան 32 տարուայ գոյութեան մասին: Այս ուղիով արտաքին մաս են կազմում Լեռնային Ղարաբաղ հայերի «վերադարձի իրաւունքի» մասին խօսակցութիւնները եւ քննարկումները, թէ ում պէտք է դիմի Հայաստանը այդ իրաւունքն ապահովելու համար՝ ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի, Եւրախորհրդի, Արդարադատութեան միջազգային

դատարանի, ԱՄՆ-ի, թէ՛ այլ երկրների, ինչպիսին Ֆրանսան է: Այլ կերպ ասած, ո՞վ պէտք է այս անգամ դառնայ «հայերի փրկիչը»:

Խնդիրն այն յստակ փաստն է, որ ոչ մի հայ չի կարող ապրել Ատրպէյջանի իրաւասութեան ներքոյ՝ անկախ այն բանից, թէ Ղարաբաղում կայ միջազգային ներկայութիւն հայերի իրաւունքները պաշտպանելու համար, թէ ոչ: Հայերի վերադարձի իրաւունքը ապահովելու միակ ճանապարհը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ատրպէյջանի վերահսկողութեան դադարեցումն է եւ Հայաստանը կարող է դա անել միայն ռազմական ճանապարհով: Միջազգային հանրութեան, միջազգային իրաւունքի եւ հետաքրքրաշարժ այլ եզրույթների վերաբերեալ մնացած բոլոր քննարկումները պարզ մանրակրկից քննարկումները են՝ յանուն քաղաքական ինչ-ինչ շահերի եւ նպատակների՝ Հայաստանի ներսում կամ դրսում:

Առաջին տարբերակը Լեռնային Ղարաբաղը շատ շուտով նոր «Արեւմտեան Հայաստանի» կամ «Նախիջևանի» վերածելու ուղիով ճանապարհն է՝ Արցախին նուերուած նոր երգերի ստեղծմամբ, Երեւանի կեդրոնում արցախեան տեղանումներով ռեստորանների բացմամբ կամ Երեւանում եւ Հայաստանի այլ քաղաքներում Ստեփանակերտի արուարձանների անունները կրկնող որոշ բնակելի թաղամասերի կառուցմամբ:

Առկայ է նաեւ մէկ այլ տարբերակ: Երկրագնդին սպասում է տուրբուլենտ մէկ-երկու տասնամեակ, մինչ շարունակուել է անցու-

մը միաբեւեռ համակարգից դէպի նոր աշխարհակարգ: Չափազանց դժուար է կանխատեսել, թէ ինչպիսին կը լինի նոր աշխարհակարգը, սակայն կարելի է պնդել, որ Հարաւային Կովկասը լինելու է ցնցումների գոտում:

Այսպիսով, Հարաւային Կովկասի աշխարհաքաղաքականութիւնը կը շարունակի փոխուել, կը փոխուեն նաեւ ուժերի յարաբերակցութիւնը եւ առանցքային խաղացողների յարաբերութիւնները: Դա միանգամայն վերաբերում է նաեւ Հայաստանի, Ատրպէյջանի եւ Լեռնային Ղարաբաղի ապագային: Սակայն եթէ Հայաստանը պարզապէս նստի ու սպասի, հաւանաբար կը շարունակի պարտուել, ինչպէս որ պարտուել է 2020-ից ի վեր:

Առաջին բանը, որ պէտք է արուեստի եւ դա պէտք է արուեստի անմիջապէս, առնուազն մինչեւ 2023-ի վերջ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահի՝ հանրապետութեան լուծարման մասին հրամանագիրը չեղեալ յայտարարելն է: Ակնյայտ է, որ եթէ այն չչեղարկուի, դա հապէս կը բարդացնի 2023-ից յետոյ իրավիճակը փոխելու ցանկացած հնարաւորութիւն: Հրամանագրի չեղարկումը կը նշանակի, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահը եւ խորհրդարանը կը շարունակեն գործել մինչեւ 2025-ի գարուն, քանի որ երկուսն էլ ընտրուել են 2020-ի գարնանը հինգ տարի ժամկետով:

Նրանք պէտք է շարունակեն գործել Երեւանում կամ, եթէ Հայաստանի կառավարութիւնը կարծում է, որ Ատրպէյջանը կ'օգտա-

գործի նրանց գործունէութիւնը որպէս casus belli՝ արդարացնելու Հայաստանի դէմ իր նոր ագրեսիան, պէտք է նրանց գործունէութեան ծաւալման նպատակով այլ պետութիւն փնտռել:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան լուծարման մասին հրամանագրի չեղարկումը չի նշանակում, որ Հայաստանը պէտք է դուրս գայ Ատրպէյջանի հետ խաղաղութեան պայմանագրի շուրջ բանակցութիւններից: Հայաստան-Ատրպէյջան հաշտութեան պայմանագիրը, ներառեալ Հայաստանի կողմից Ատրպէյջանի տարածքային ամբողջականութեան ճանաչումը Խորհրդային Ատրպէյջանի սահմաններում (86 600 քկմ), որեւէ կապ չունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան գոյութեան հետ: Հանրապետութիւնը դէ իւրի պէտք է շարունակի գործել, եւ հայերը պէտք է պատրաստ լինեն վերականգնելու այն, եթէ ստեղծուեն անհրաժեշտ պայմաններ համաշխարհային եւ տարածաշրջանային ցնցումների պայմաններում: Ոչ ոք չի կարող երաշխաւորել, որ այդ պայմանները կ'առաջանան, բայց ոչ ոք չի կարող պնդել, որ դրանք չեն լինի: Ամէն ինչ պէտք է անել, որպէսզի հայութիւնը պատրաստ լինի օգտագործել այդ հնարաւորութիւնները եւ այդ ուղղութեամբ առաջին քայլը Սեպտեմբերի 28-ի հրամանագրի չեղարկումն է:

Բենիամին Պօղոսեանը ԱՊՐԻ Արմենիա վերլուծական կեդրոնի աւագ վերլուծաբան է:

«ՍԻՎԻԼՆԵԹ»

Թեհրանի Ռու-Թուրքական Փորձութիւնը

ՄՈՒՍԱ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Վրաստանը, ինչպէս եւ սպասելի էր, հրաժարուել է մասնակցել Թեհրանում այսօր նախատեսուած՝ արտաքին գործերի նախարարների մակարդակով 3+3 ձեւաչափի բանակցութիւններին: ԱԳՆ յայտարարութեան այն շեշտադրումը, որ Թբիլիսին երբեք չի մասնակցել նման հանդիպման, ակնարկ է, որ Վրաստանը նախապատրաստական փուլին չի ներգրաւուել եւ մտադիր չէ ապագայում ներգրաւուել: Բոլորովին վերջերս Իլհամ Ալիեւը աշխատանքային այցով Թբիլիսիում էր: Ըստ երեւոյթին, Մոսկուան եւ Անկարան նրան վրայ էին թողել Վրաստանի վարչապետին համոզելու պարտաւորութիւնը, ինչը չի յաջողուել: Դէմք փրկելու համար Ալիեւը յայտարարեց, որ Վրաստանը կարող է հայ-ատրպէյճանական յարաբերութիւնների կարգաւորման բանակցութիւնների միջնորդ լինել: Վրաստանի վարչապետը նրբանկատօրէն հրաժարուեց նաեւ այդ «պատուից» եւ յայտարարեց, որ Թբիլիսին պատրաստ է հարթակ տրամադրել, եթէ կողմերը նման ցանկութիւն յայտնեն:

Այսօր ռուս-թուրքական նախաձեռնութիւնը լեզբիմասնակցութեամբ թանրութիւն Թեհրանն է հիւսել: Այն դէպքում, երբ Իրանը սեփական խնդիրներն ունի: Բայց հարկ է առանձնացնել երկու, մեր կածիքով, կարեւոր իրողութիւն: ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը չեղարկել է Իրան հրթիռային մի-

ջոցների ներմուծման եւ Իրանից դրանց արտահանման արգելքը: Փաստացի դա նշանակում է, որ Իրանի հրթիռային ծրագրի առջեւ «կարմիր լոյսը» անջատուել է: Ինչ նկատառումներից է ծնուել նման որոշումը, երբ պաղեստինա-իսրայէլական լարուածութիւնը ոչ միայն չի մարում, այլեւ նոր թափ է ստանում՝ կարելի է միայն ենթադրութիւններ անել: Փաստ է, որ պաղեստինա-իսրայէլական սրացումից անմիջապէս յետոյ Թուրքիան եւ Ատրպէյջանը յայտարարեցին համատեղ գորավարժութիւնների անցկացնելու մասին: Դրանք արդէն մեկնարկել են, միաժամանակ ընթանում են Պաքում, որտեղ, ըստ երեւոյթին, ստեղծուել է միասնական հրամանատարա-շտաբային կեդրոն, Նախիջևանում եւ Արցախի բռնագաւթուած տարածքներում:

Միանշանակօրէն ասել, թէ այդ գորավարժութիւնները զգուշացում են բացառապէս Հայաստանին, ամենայն հաւանականութեամբ, իրողութեան ոչ ամբողջական ընկալում կը լինէր: Իրան-Ատրպէյջան յարաբերութիւններն, այո, վերջին մէկ-երկու ամիսներին զգալիօրէն բարելաւուել են: Բայց Մերձավոր Արեւելքում Թուրքիայի եւ Իրանի մրցակցութիւնը սկզբունքօրէն չի փոխուել: Եւ գորավարժութիւնների այսպէս ասած, լոկացիան՝ Նա-

խիջևան եւ Արցախի բռնագաւթուած տարածքներ, անկասկած գգալուն է նաեւ Իրանի համար: Մանաւանդ որ Թուրքիան եւ Ատրպէյջանը ներգրաւուել են նաեւ ինժեներական գործեր: Ռեկրեֆի եւ հայատրպէյջանական սահմանի ներկայիս իրավիճակի գնահատմամբ՝ ինժեներական գործերն այնտեղ կանխատեսելի անելիք գրեթէ չունեն. ամէն ինչ, ինչպէս ասում են՝ «ափի մէջ է»: Իսկ Իրանի պարագայում կայ Արաքսը գետանցելու խնդիր: Իսրայէլի բարձրաստիճան պաշտօնեաներից մէկը Թուրք-ատրպէյճանական գորավարժութիւնների մեկնարկից ժամեր առաջ յայտարարել է, որ եթէ Իրանը հիւսիսից երկրորդ ճակատ բացի, ապա Իրանք ստիպուած կը լինեն անցնել «օձի գլուխը հատելու ռազմագործողութեան»: Սպառնալիքի հասցեատէրն, ինչը իսրայէլցի պաշտօնեան չի էլ փորձել թաքցնել, Իրանն է:

Ահա այս համատեքստում է Թեհրանը հիւրընկալում Ռուսաստանի, Թուրքիայի, Ատրպէյջանի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարներին: Իսկ մի քանի օր առաջ էլ գրեթէ համաժամանակեայ տեղի է ունեցել Վլադիկավկազ-Մախաչկալա-Ատրպէյջանի սահման, Պաքու-Ղուբա-Ռուսաստա-

Շար.ը էջ 6

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր տեսակետները

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏԵՕՐԵՆ
ՎԱՂԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Յօգուտ Հայաստանի Հանրապետության Բռնագանձել՝ 1000 Անշարժ Եւ 200 Շարժական Գոյք. Գլխաւոր Դատախազուքիւն



Գլխաւոր դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւնը ձեւաւորում է մինչ օրս (2020 թուականի Սեպտեմբերէն մինչեւ 2023 թուականի Սեպտեմբերը) նախաձեռնած է 419 ուսումնասիրութիւն, 115 վարոյթներով դատարան ներկայացուցած է հայցի նախնական ապահովում կիրառելու վերաբերեալ միջնորդութիւն:

Վարչութիւնը, իրականացուցած ուսումնասիրութիւններուն բերումով, դատարան ներկայացուցած է 89 հայցադիմում, որոնցով կը պահանջէ յօգուտ Հայաստանի Հանրապետութեան բռնագանձել ապօրինի ծագում ունեցող շուրջ 1000 անշարժ եւ 200 շարժական գոյք, 270 իրաւաբանական անձերու մօտ մասնակցութիւն:

Գնահատուած գոյքերու շու-

կայական արժէքներու հաշուարձմամբ, հայցերու ընդհանուր հայցագինը կը գերազանցէ 500 միլիարդը (բազմաթիւ գոյքերու՝ այդ շարքին իրաւաբանական անձերու մօտ մասնակցութիւններու շուկայական արժէքը այս փուլին տակաւին գնահատուած չէ. թիւը ունի աճի միտում):

89 հայցադիմումներէն 67-ը ներկայացուած է 2023 թուականի ընթացքին:

Գլխաւոր դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւնը մինչ օրս կնքած է հաշտութեան 4 համաձայնութիւն, որոնցով պետութեան փոխանցուած է 6 անշարժ եւ 1 շարժական գոյք՝ ընդհանուր շուրջ 2 միլիարդ 100 միլիոն դրամ արժէքով, ինչպէս նաեւ շուրջ 79 միլիոն դրամ:

Մարտ 1 Ըրած, Երկիրը Թալանած Մարդիկ Ինչո՞ւ Բանտարկուած Չեն. Ալէն Սիմոնեանը՝ Հարց Կու Տայ Դատաւորներուն

Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան Աժ հերթական նիստին ելոյթ ունենալով նախ նշեց, որ իսկապէս դատաւոր ըլլալը դժուար բան է, որովհետեւ անոր վճիռէն մշտապէս մէկ կողմը միշտ դժգոհ կ'ըլլայ. «էն դատաւորը, որը էս կողմի համար է լաւ որոշում կայացրել, լաւն է, եւ այլն»:

Ի պատասխան Գեղամ Մանուկեանի ելոյթին, թէ Մամիկոն Ասլանեանը բանտարկուած է միայն այն բանին համար, որ չէ հրաժարած քաղաքացիութիւնը պաշտօնէն, Աժ նախագահը ըսաւ. «Մէկն էլ կողքից կը լսի, կը մտածի, թէ Մամիկոն Ասլանեանը իշխանութեան ամենամեծ, ամենավախենալու բանն էր: Ես դատական համակարգի հետ ուրիշ խնդիր ունեմ. ինչի՞ նստած չեն այն մարդիկ, ովքեր վաղուց պիտի նստած լինէին, ինչի՞ են մարդկանց բռնել տանելուց մի քանի ժամ յետոյ բաց թողնում»:

Անդրադառնալով «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արծուիկ Մինասեանի ելոյթին մէջ հնչած խարդախութիւններուն՝ Ալէն Սիմոնեանը հարցում բարձրացուց. «Դատարանի դահլիճում մահացած մարդը դատական գործունէութեան պատճառով է մահացել, որ դրա մասին չք խօսում»:

Ինչ կը վերաբերի Ազնեսա Խամոյեանի ելոյթին, թէ Սեպտեմբեր 19-ին վրդովուած մարդոց բերման ենթարկած են,



Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

Ալէն Սիմոնեան ըսաւ. «էդ էն քֆուրներով փողոցում վազվզող, մեքենայ ջարդող տղաների մասին էք ասում. իրենց պէտք էր տապալել պոլին, ինչը որ արուեց, եւ այո՛, ուղարկել այնտեղ, որտեղ որ լինում են Երեւանում խուլիգանութիւն արած մարդիկ»:

Դիմելով ԲԴԽ նախագահին, դատաւորներուն՝ Աժ նախագահը ըսաւ. «Ձեր արդարադատութիւնը շատերին ձեռք չի տալիս, որովհետեւ էն մարդիկ, ովքեր Մարտի 1 են արել, ընտրութիւն են կեղծել, մարդկանց ծեծել են տուել, ովքեր թալանել ու սեփանաշտրհել են էս երկիրը, ինչի՞ նստած չեն. իմ հարցը դա է»:

Կոչ Կ'ընենք Չդիտարկելու ՀՀ-ն Արտագաղթելու, Հեռանալու Տարբերակը. Վարչապետը՝ ԼՂ-էն Բռնի Տեղահանուած Քաղաքացիներուն

Այսօրուան դրութեամբ ԼՂ-էն բռնի տեղահանուած աւելի քան 3 հազար անձ դուրս եկած է Հայաստանի Հանրապետութենէն:

Այս մասին, Հոկտեմբեր 19-ին, կառավարութեան նիստին ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:


«Չեմ ուզում հետեւութիւններ անել այս թեմայի հետ կապուած, գուցէ նրանցից շատերը գնում են իրենց ազգականներին տեսնելու, մի քիչ ժամանակ անց կացնելու: Ես յոյս ունեմ, որ շատ յստակ ենք մենք այդ ուղերձը տալիս՝ կոչ եմ անում ԼՂ-ից բռնի տեղահանուած մեր քոյրերին եւ եղբայրներին, որպէս իրենց առաջնային ծրագիր, ունենալ ՀՀ-ում

մնալը», ըսաւ կառավարութեան ղեկավարը:

Ըստ անոր՝ ՀՀ կառավարութիւնը ամէն ինչ կ'ընէ ԼՂ-էն բռնի տեղահանուած բնակչութեան աջակցելու համար:

«Այն դէպքում, երբ տէ ֆաքթօ կ'ամ ցանկութիւն, կ'ամ հնարաւորութիւն չի լինի վերադառնալ ԼՂ, մեր քաղաքականութիւնն է՝ ամէն ինչ անել, որպէսզի նրանք մնան ՀՀ-ում», ըսաւ Փաշինեան՝ յիշեցնելով, որ արդէն աւելի քան 100 միլիոն տղարի յատկացում ըրած է ՀՀ կառավարութիւնը, տարբեր ծրագրեր մշակած է ԼՂ-էն բռնի տեղահանուածներուն կարիքները հոգալու համար:

Միջին Աշխատավարձի Մեծութեամբ Հայաստանը Առջեւ Է Հարեւան Երկիրներէն, Նաեւ Ռուսիայէն



Փաստերու ստուգմամբ գրադող «Fact Protocol»-ը հրատարակած է աշխարհի երկիրներու ցանկը՝ ըստ միջին ամսական աշխատավարձին:

Հարկուած միջին աշխատավարձի մեծութեամբ Հայաստանը առջեւ է հարեւան երկիրներէն, նաեւ Ռուսիայէն: 101 երկիրներու շարքին Հայաստանը միջին աշխատավարձի չափով կը գրադեցնէ 57-րդ հորիզոնականը: Հայաստանցիներու իրական միջին աշխատավարձը կը կազմէ

մէ \$682,93:

73-րդ հորիզոնականին Ռուսաստանն է՝ \$488,49, որուն անմիջապէս կը յաջողէ Վրաստանը՝ \$484,31, ապա Թուրքիան՝ 84-րդ հորիզոնականին՝ \$484,31-ով: Ասորպէս չճանի մէջ միջին աշխատավարձի չափը կը կազմէ \$374,87՝ գրադեցնելով 86-րդ հորիզոնականը: Իրանը ցանկին մէջ կը գրադեցնէ 94-րդ հորիզոնականը՝ \$272,23 միջին աշխատավարձով:

Եթէ Շահրամանեանը Ոչինչ Ստորագրած Է, Ի՞նչ Գործ Ունի Հայաստանի Մէջ, Պետք Է ԼՂ-ի Մէջ Ըլլար Ու Ղեկավարէր. Անդրանիկ Քոչարեան

«Ամէն մէկը պէտք է պատասխան տայ իր արածի կամ չարածի համար: Ես պատասխան կը տամ իմ արածի կամ չարածի համար, բայց այն, ինչ որ արուեց Արցախում՝ մինչեւ իսկ հայաթափումը, դրա համար պէտք է պատասխան տան այն մարդիկ, որոնցից պահանջում է նաեւ Հայաստանում գտնուող արցախահայութիւնը», ըսած է Ազգային ժողովի «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Անդրանիկ Քոչարեանը:

Պէտք է, ուզենք թէ չուզենք, ստեղծենք մի հատ էլ յանձնաժողով, որ պարզենք՝ վերջին հաշուով ինչը ստորագրուեց, ու ում կողմից թելադրուեց, ինչ էր գրուած էդտեղ, եւ արդիւնքը այն էր, որ Արցախը հայաթափուեց այս պահին, բայց դա արդեօք հեռանկարից գրկու՞մ է: Այ, հեռանկարից գրկումն այն է, որ այն մարդը, որը որ 22 ձայնով վերցրել էր պատասխանատուութիւն եւ Արցախի Հանրապետութեան գործող Սահմանադրութեան առջեւ երդուել էր, այդ պատասխանատուութիւնը չկատարեց, եւ մի հատ էլ Հայաստան



ՔՊ խմբակցութեան պատգամաւոր Անդրանիկ Քոչարեան

տեղափոխուելուց յետոյ ասում է՝ այդպիսի թուղթ չկայ: Եթէ չկայ, ես հարց եմ հնչեցնում՝ այդ դէպքում ինչո՞ւ ինքը Արցախում չի եւ գտնուում է Հայաստանում: Եւ ո՞նց ստացուեց, որ նախկին նախագահները հիմա Պաքում են, պարոն Շահրամանեանը բարեյաջող, չգիտեմ ինչ ճանապարհով, անցաւ կամուրջը», ըսաւ Անդրանիկ Քոչարեան:

ԼՈՒՐԵՐ

«3+3»-ի Հանդիպման Ընթացքին Ընդգծուած Է Սահմաններու Անխախտելիութիւնը



Թեհրանի մէջ կայացած «3+3» ձեւաչափով հանդիպումի մասնակիցները

«3+3» տարածաշրջանային հարթակի յաջորդ հանդիպումը պիտի կայանայ Թուրքիոյ մէջ, ըստած է Թեհրանի մէջ արտաքին գործերու նախարարներու մակարդակով կայացած հանդիպման վերաբերեալ համատեղ հաղորդագրութեան մէջ: Ժամկէտները չկան, կը նշուի, որ անոնք պիտի համակարգուին դիւանագիտական խորովակներու միջոցով:

Բացի անկէ, արտաքին գործերու նախարարները, հաշուի առնելով երկիրներուն միջեւ փոխադարձ շահերու եւ բարիգրացիական հարեւանութեան վրայ հիմնուած յարաբերութիւններու զարգացման կարեւորութիւնը, ընդգծած են այդ առումով վէճերու խաղաղ կարգաւորման, ինքնիշխանութիւնը յարգելու, քաղաքական անկախութեան, տարածքային ամբողջականութեան, միջազգայնօրէն ճանաչուած սահմաններու անխախտելիութեան, ներքին գործերուն չմիջամտելու, սպառնալիքի կամ ուժի կիրառման արգելքի եւ մարդու իրաւունքները չարգելու կարեւորութիւնը՝ Միացեալ ազգերու կազմակերպութեան կանոնադրութեան բոլոր սկզբունքներու հիման վրայ:

Թեհրանի մէջ հանդիպման մասնակցած են Հայաստանի, Իրանի, Ռուսաստանի, Թուրքիոյ եւ Ատրպէյճանի արտաքին քաղաքական

զերատեսչութիւններու ղեկավարները:

Անոնք քննարկած են տարածաշրջանին մէջ առկայ ամենակարեւոր հարցերը եւ ընդգծած «3+3» հարթակին կարեւորութիւնը:

«Տեւական խաղաղութեան եւ տնտեսական զարգացման խթանման համար պէտք է ամրապնդեն երկկողմ եւ բազմակողմ խորհրդակցութիւններն ու փոխգործակցութիւնը:

Դրական գնահատելով այս հանդիպման արդիւնքները՝ անոնք վերահաստատած են, որ այս հարթակը բաց է վրաստանի հաւասար մասնակցութեան համար», ըստած է համատեղ յայտարարութեան մէջ:

«3+3» ձեւաչափով նախաձեռնութիւնը 2020 թուականին՝ 44-օրեայ պատերազմի աւարտէն յետոյ, ներկայացուցած են Թուրքիոյ եւ Ատրպէյճանի նախագահները: Պաշտօնական թիֆլիսը այն ժամանակէն յայտնած է, որ կը հրաժարի հաւաքներուն մասնակցելէ:

2021 թուականի Դեկտեմբեր 10-ին Մոսկուայի մէջ տեղի ունեցած է հինգ երկիրներու արտաքին գործերու փոխնախարարներու մակարդակով խորհրդատուական տարածաշրջանային հարթակի առաջին այդօրինակ հաւաքը:

ԱՄ Պետական Քարտուղարութիւնը Թեհրանի Մէջ «3+3» Ձեւաչափով Հանդիպման Մասին

Ամերիկայի Միացեալ Նահանգները կ'ողջունէ որեւէ բարեխիղճ ներգրաւուածութիւն, որ կը նպաստէ խաղաղութեան ու կայունութեան Հարաւային Կովկասի ժողովուրդներուն համար՝ անկախ անկէ, թէ ուր կ'ընթանան այդ բանակցութիւնները կամ ով զանոնք կը հիւրընկալէ:

Այս մասին ճեպագրոցի ժամանակ յայտնած է ԱՄՆ Պետական Քարտուղարութեան մամուլի խօսնակ Մեթիլ Միլլըրը՝ անդրադառնալով Թեհրանի մէջ Հայաստանի, Իրանի, Ռուսաստանի, Թուրքիոյ եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներու հանդիպման:

Ճեպագրոցի ժամանակ լրագրողներէն մէկը նշած է, որ Թեհրանը հիւրընկալած է հնգակողմ հանդիպում, որուն մաս են նաեւ Թուրքիան ու Ռուսաստանը եւ

անոնք ալ կը քննարկեն Հայաստան-Ատրպէյճան հարցը: Ան Պետական Քարտուղարութեան խօսնակէն խնդրած է մեկնաբանել այդ հանդիպումը, որուն ի պատասխան՝ Միլլըրը նշած է.

«Ինչ կը վերաբերի Հայաստան-Ատրպէյճան հարցին, մենք կ'ողջունենք որեւէ բարեխիղճ ներգրաւուածութիւն, որ կը նպաստէ Հարաւային Կովկասի ժողովուրդի խաղաղութեան ու կայունութեան՝ անկախ անկէ, թէ ուր տեղի կ'ունենան այդ բանակցութիւնները, կամ ով կ'ընդունի զանոնք: Ասով հանդերձ մենք կը ճանչնանք Հարաւային Կովկասի աշխարհագրական նուրբ դիրքը Ռուսաստանի եւ Իրանի նկատմամբ, բայց այդ երկիրները վստահելի գործընկեր չենք համարեր», ըսած է Միլլըրը:

Արարատ Միրզոյեանը Թեհրանի Մէջ Հանդիպած Է Իրանի Նախագահին Հետ



Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան հանդիպում կ'ունի Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Իսլամաբադին հետ

Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Իսլամաբադին Ռախիսին, Հոկտեմբեր 23-ին, Թեհրանի մէջ ընդունած է Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը:

Զրուցակիցները գտնուակութեամբ արձանագրած են, որ երկու հարեւան եւ բարեկամ երկիրներուն միջեւ ձեւաւորուած է բարձր մակարդակի քաղաքական երկխօսութիւն՝ հիմնուած փոխադարձ յարգանքի եւ երկու ժողովուրդներու հազարամյայ եղբայրութեան վրայ:

Պաքուն Կը Քննադատէ Հոլանտայի Խորհրդարանին Որոշումը՝ ՀՀ-ին Սպառազինութիւն Տրամադրելու Մասին

Պաքուն կը քննադատէ Հոլանտայի խորհրդարանին որոշումը, որով Օրէնսդիրը Թագաւորութեան գործադիր մարմինին կոչ կ'ընէ դրական արձագանգելու Հայաստանին սպառազինութեան օգնութիւն տրամադրելու խնդրանքին: Հոլանտայի Ներկայացուցիչներու Պալատը նման որոշում ընդունած է անցեալ շաբաթ:

Հոլանտայի հայկական կազմակերպութիւններու դաշնութեան փոխանցմամբ՝ հոլանտացի պատգամաւորները կառավարութեան պահանջած են յստակացնել՝ աւելի քան 9 ամիս տեւած շրջափակումէ եւ Ատրպէյճանի զինուած ուժերու չարձակումէն յետոյ Լեռնային Ղարաբաղէն հայերու արտագաղթը կը մտնէ՞ ցեղային գտնամներու սահ-

ՀՀ արտաքին գործերու նախարարը եւ Իրանի նախագահը կարեւորած են տարբեր ոլորտներու մէջ Հայաստան-Իրան փոխգործակցութեան խորացումը եւ այդ ուղղութեամբ պայմանաւորուածութիւններու իրականացման ուղղութեամբ գործուն քայլերու իրականացումը:

Արարատ Միրզոյեան եւ Իսլամաբադին Ռախիսին քննարկել են նաեւ տարածաշրջանային եւ միջազգային անվտանգութեան վերաբերող հարցեր:

մանման տակ: «(Փաստաթուղթը) ապակառուցողական է եւ մեր տարածաշրջանը կը մղէ ռազմականացման, այլ ոչ թէ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան եւ հաշտեցման», ատրպէյճանական «ԱՊԱ» գործակալութեան ըսած է Հոլանտայի մէջ Ատրպէյճանի դեսպան Ռախման Մուսթաֆաեւը:

Յիշեցնենք, որ Ատրպէյճանը ԵՄ-ի կազմին մէջ Հոլանտայի դաշնակից Իտալիոյ հետ բոլորովին վերջերս ռազմական օդանավերու ձեռքբերման գործարք կնքած է, մինչ այդ ալ՝ սպանական ռատարներ ձեռք բերած է Սպանիայէն, Հաուայիցներ՝ Չեխիայէն ու Սլովաքիայէն, որոնք ստացել է Իսրայէլի միջոցով:

Վիզաներու Ազատականացումը Կրնայ Եւս Մէկ Քայլ Ըլլալ Հայաստան-ԵՄ Մերձեցման Ծանապարհին. Միխայէլ Ռոթ

Գերմանիոյ Պունտեսթակի Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Միխայէլ Ռոթ կը կարեւորէ Հայաստանի քաղաքացիներուն համար ԵՄ վիզաներու ազատականացումը Հայաստան-Եւրոմիութիւն յարաբերութիւններու մերձեցման տեսանկիւնէն:

Ռոթ այս մասին յայտնեց Երեւանի մէջ, լրագրողներու հետ ճեպագրոցի ժամանակ:

«Մենք կը սատարենք այն յստակ ուղեւոր, որ կը վերաբերի վիզաներու ազատականացման Հայաստանի հետ յարաբերութիւններու մէջ: Սա կրնայ եւս մէկ քայլ ըլլալ Հայաստան-Եւրոմիութիւն մերձեցման ճանապարհին», ընդգ-

ծեց Ռոթ: Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած Միխայէլ Ռոթի գլխաւորած պատուիրակութիւնը:

Վարչապետը ողջունած է Միխայէլ Ռոթի այցը եւ կարեւորած է Հայաստանի եւ Գերմանիոյ խորհրդարաններուն միջեւ համագործակցութեան եւ երկխօսութեան շարունակական զարգացումն ու ամրապնդումը: Նիկոլ Փաշինեանը Հայաստան-Գերմանիա եւ Հայաստան-ԵՄ փոխգործակցութեան ծիրին մէջ ընդգծած է Հայաստանի մէջ իրականացուող ժողովրդավարական բարեփոխումներու արդիւնաւէտ յառաջմղման անհրաժեշտութիւնը:

ՍԴՀԿ Գանատայի Վարիչ Մարմինները Կը Դատապարտեն ՀՀԴ-ի Արարքը

Յանուար 1-ին Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան Թորոնթոյի եւ Մոնրէալի Վարիչ Մարմիններուն, կը դատապարտեն «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին կողմէ 15 Հոկտեմբերին Թորոնթոյի մէջ կազմակերպուած տարեկան դրամահաւաքին ՀՀԴ-ի անդամներու կողմէ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Ն.Գ. Անահիտ Յարութիւնեանի սրահ մուտքը արգիլելու անընդունելի արարքը:



Տասնամեակներէ ի վեր «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը հանդիսացած է աշխարհասփիւռ հայութիւնը միաւորող կառոյց մը՝ զերծ որեւէ քաղաքական կամ հատուածական նկատառումներէ: Այդ առումով, ինչպիսիք ալ ըլլան մեր մօտեցումները Հայաստանի ներկայ իշխանութիւններուն նկատմամբ, Հիմնադրամին ձեռնարկը պատեհ վայրը չէր քաղաքական կեցուածք արտայայտելու եւ Հայաստանի պետութեան ներկայացուցիչին նկատմամբ նման անյարգալիւր վերաբերմունք ցուցաբերելու:

Բացի այդ, Արցախէն բռնի տեղահանուած մեր հայրենակիցներուն աջակցելու համար կազմակերպուած այս միջոցառումը կոչուած էր պատգամ յղելու անոնց, որ համայն հայութիւնը, անկախ իր բնակութեան վայրէն, անվերապահօրէն նեցուկ կը կանգնի արցախահայութեան: Դժբախտաբար այս բոլորովին անտեղի եւ անիմաստ արարքը ստուերի տակ ձգեց այդ կարեւոր նախաձեռնութիւնը, փոխարէնը պատճառ դառնալով ակնկալուած եկամուտը ապահովելու ձախողութեան եւ գաղութներու ստեղծելով անհարկի լարուածութիւն ու պառակտում, երբ այսօր աւելի քան երբեք անհրաժեշտ է ըլլալ համախմբուած ու միասնական:

Միւս կողմէ բարձր կը գնահատենք դեսպանին խիզախ եւ արժանավայել պահուածքը միջադէպին ընթացքին եւ կը մաղթենք անոր արգասաբեր գործունէութիւն եւ յաջողութիւն՝ ի շահ մայր հայրենիք Հայաստանի:

ՍԴՀԿ Թորոնթոյի Վարիչ մարմին
ՍԴՀԿ Մոնրէալի Վարիչ մարմին
18 Հոկտեմբեր 2023

Հայաստանն Ու Իրանը Կը Դիտարկեն Սահմանին Երկրորդ Կամուրջ Կառուցելու Հնարաւորութիւնը



Հայաստանն ու Իրանը քննարկած են հայ-իրանեան սահմանին նոր կամուրջ կառուցելու հեռանկարը: Այս մասին յայտնած է Իրանի ճանապարհներու եւ քաղաքաշինութեան նախարար Մեհրտաւ Պազրփաշը:

Պազրփաշ յայտնեց, որ իրանեան կողմը պատրաստ է բարեկամ Հայաստանին փոխանցելու ենթակառուցումներու զարգացման գործին մէջ ունեցած հարուստ փորձը՝ խթանելով մասնաւորապէս Հիւսիս-հարաւ մայրուղիի շինարարութիւնը: Իրանցի նախարարին կարծիքով՝ Հայաստանի ու Իրանի միջեւ գործող կամուրջը արդէն բաւարար չէ ապահովելու աճող ապրանքաշրջանառութեան ծաւալները, ուստի Թեհրանը կը դիտարկէ նաեւ նոր կամուրջի շինարարութեան հեռանկարը: Հայկական կողմին հետ ձեռք բերուած է պայմանաւորուածութիւն՝ այդ առթիւ աշխատանքային խումբ ձեւաւորելու համար:

Մեհրտաւ Պազրփաշը իր հերթին նշեց, որ հայկական կողմին հետ ունեցած են բաւականին արդիւնաւէտ քննարկումներ՝ Հիւսիս-հարաւ ճանապարհի շինարարութեան հետ կապուած ձեռք բերելով կարեւոր պայմանաւորուածութիւններ:

«Ըլլալով բարիդրացիական յարաբերութիւններ ունեցող դաւաճող հարեւաններ՝ մեր ժողովուրդները այսօր պէտք է զարգացնեն իրենց տնտեսական ներուժը եւ այդ ճանապարհին կատարեն անհրաժեշտ քայլեր: Իրանի կառավարութիւնը իր պատրաստակամութիւնը կը յայտնէ Հայաստանի հետ տարբեր ծրագրերու մէջ համագործակցելու վերաբերեալ: Հաշուի առնելով յստակ մեր երկու նախարարութիւններուն միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները՝ մտադիր ենք հետեւողականօրէն իրականացնել առկայ ծրագրերը: Մեզի համար չափազանց կարեւոր է այդ ծրագրերէն մէկուն մէջ

Վարչապետին Յանձնուած Է Հոռոմի Ֆրանչիսկոս Պապին Կողմէ Շնորհուած Շքանշանը



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Սուրբ Աթոռի առաքելական նուիրակ գերաշնորհ արքեպիսկոպոս Ժողէ Ավելինօ Պեթանքուրին, որ կ'աւարտէ դիւանագիտական առաքելութիւնը Հայաստանի մէջ:

Հայաստանի եւ Սուրբ Աթոռի միջեւ կապերու ամրապնդման նպատելու համար, արքեպիսկոպոս Պեթանքուրը վարչապետ Փաշինեանին յանձնած է Հռոմի Ֆրանչիսկոս պապին կողմէ շնորհուած՝ Սուրբ Աթոռի

բարձրագոյն պարգևներէն՝ Փիոս 9-րդ պապի «Ասպետական Մեծ Խաչ» շքանշանը:

Վարչապետը շնորհակալութիւն յայտնած է բարձր գնահատանքին համար եւ ընդգծած է ՀՀ կառավարութեան շահագրգռուածութիւնը՝ հետեւողականօրէն զարգացնելու կապերը Սուրբ Աթոռին հետ: Նիկոլ Փաշինեան արքեպիսկոպոս Պեթանքուրին մաղթած է յաջողութիւններ հետագայ գործունէութեան մէջ:

Արցախի Մէջ Մնացածները Փոխադրամիջոց Կը Կը Խնդրեն՝ Հեռանալու Համար. ԿԽՄԿ

Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէն կը յայտնէ, որ Արցախի մէջ ռոքոնողական աշխատանքներու շնորհիւ նոր անձեր կը գտնեն:

«Փոքր թիւով մարդիկ կը մնան իրենց տուններուն մէջ կա'մ իրենց ընտրութեամբ, կա'մ այն պատճառով, որ չեն կրցած հեռանալ: Ոմանց անհրաժեշտ է բժշկական օգնութիւն, սնունդ եւ ջուր:

Միւսները օգնութիւն կը խնդրեն հարազատներու հետ կապ հաստատելու կամ ալ հեռանալու համար փոխադրամիջոց ստանալու նպատակով: Տունները, խանութներն ու գրասենեակները լքուած են, իսկ փողոցներուն մէջ կարելի է տեսնել բազմաթիւ շուներ եւ կատուներ», յայտնած են ԿԽՄԿ-էն:

ԱՄՆ-ն Ու ԵՄ-ն Յանձնառու Կը Մնան

Շարունակուած էջ 1-էն

ուժ կիրառելէ կամ ուժի դիմելու սպառնալիքներէն:

ԱՄՆ-ԵՄ համատեղ յայտարարութիւնը խստօրէն կը դատապարտէ «Համաս»-ը եւ անոր դաժան ահաբեկչական յարձակումը Իսրայէլի վրայ: «Ահաբեկչութիւնը որեւէ արդարացում չունի: Մենք կը հաստատենք Իսրայէլի ինքնապաշտպանութիւնը իրաւունքը այդ նողկալի յարձակումներէն», նշուած է փաստաթուղթին մէջ:

Հանդիպման ընթացքին Եւրոյան ձեռնարկով նախագահ Ուրսուլա Վոն Երթըն ըսած է, որ միասին կանգնած են Իսրայէլի կողքին՝ ընդդէմ ահաբեկչութեան, նշած է, որ պաղեստինցի ժողովուրդը եւ «Համաս»-ի գոհն է: Շարլ Միշէլ ըսած է, որ կ'ուզեն խաղաղութեան գործընթաց՝ հիմնուած երկու պետութեան սկզբունքի վրայ:

ԱՄՆ նախագահը հանդիպման

ընթացքին ըսած էր, որ Իսրայէլէն ու Եգիպտոսի նախագահէն հաւաստիացումներ ստացած է, որ մարդասիրական օգութեան համար կազմի հատուածին անցակէտը պիտի բացուի, ըսած է, որ կը քննարկեն իրավիճակը Իսրայէլի եւ Ուքրանիոյ մէջ ու նաեւ տնտեսական հարցեր շօշափած է՝ առաջարկելով քննարկել մետաղի, ալիմինիումի, օգտակար կարեւոր հանածոներու, անոր խօսքերով, «անարդար առեւտուրը»:

Նահանգները եւ Եւրոմիութիւնը Ռուսաստանին կոչ ըրած են դադարեցնելու դաժան պատերազմը եւ անյապաղ, ամբողջովին ու առանց վերապահումներու դուրս բերելու գործերը Ուքրանիոյ միջազգայնօրէն ճանչցուած տարածքէն:

ԱՄՆ-ի եւ Եւրոպայի առաջնորդները վերահաստատած են աջակցութիւնը վարստանի եւ Մոլտովայի տարածքային ամբողջականութեան եւ անոնց եւրոպական ձգտումներուն:

Իրանեան ընկերութիւններուն ներգրաւուածութիւնը, որոնք ներդրումներու առումով կը գտնուին բարենպաստ վիճակի մէջ: Անոնք ոչ միայն Իրանի, այլեւ միջազգային ասպարէզի մէջ ունին յուսալի գործընկերներ՝ վերջիններուս ու-

շաբաթները սեւեռելով իրենց վրայ: Յոյս ունինք նաեւ Հայաստանի մէջ անոնց ճարտարատեխնիկական բարձրակարգ աշխատանքներուն ապահովմանը ըլլալ», ըսաւ Իրանի ճանապարհներու եւ քաղաքաշինութեան նախարարը:

Մանիպուլյացիայ Ու Կեղծիք՝ Ամեն Ռոպեում. Ռուսական Առաջին Ալիքի Հաղորդումը՝ Փաշինյանի Մասին



Մանիպուլյացիա ու կեղծիք՝ ամեն ռոպեում. ռուսական առաջին ալիքի հաղորդումը՝ Փաշինյանի մասին

Ռուսական «Առաջին Ալիքի» «Ժառանգ Տոլտիի Տիկնիկները» հաղորդման Հոկտեմբերի 23-ի՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին ու իր քաղաքական գործունեությանն անդրադարձող թողարկմանը տասնեակ կեղծ ու մանիպուլյատիվ պնդումներ են արուել: «Փաստերի Ստուգման Հարթակն» ամփոփել է դրանք:

«Փաշինյանը ԼՂ-ն գլխացալանք է համարել»

Թողարկման սկզբում պնդում է արուել, թե Փաշինյանը 2007 թուականին իբր ասել է, որ «արցախը գլխացալանք է», եւ որ «այն յանձնելով՝ Հայաստանը ճանապարհ կը ստանայ դէպի Ադրբեջան, Թուրքիա ու Իրան», «կարեւորը լաւ ապրելն է, եւ ոչ թէ անհասկանալի ազգայնական յաւակնութիւններ ունենալը»:

Ռուսական «Առաջին Ալիքը», սակայն, կեղծում է. Փաշինյանը երբեւէ նման հրապարակային յայտարարութիւն չի արել:

Ինչպէս է Փաշինյանը վիրաւորել ձեռքը

Ռուսական «Առաջին Ալիքը», 2018 թուականի Թաւաշի քաղաքացիական պատերազմի օրերին Փաշինյանին ձեռքի վիրակապը ներկայացնելով որպէս տեխնոլոգիա, կասկած է յայտնել, որ նա առհասարակ վիրաւորուել է: մինչդեռ, Փաշինյանը ձեռք վնասել է 2018 թուականի Ապրիլի 16-ին Բաղրամեան պողոտայում քաղաքացիական անհնազանդութեան գործողութիւնների ընթացքում ոստիկանական փշալարը հեռացնելու փորձերի ժամանակ:

Սիւնիքում աղբիւրային գիւղեր

Թողարկման փորձագէտներից Ալեքսանդր Արատամոնովը պնդում է, որ Սիւնիքում «աղբիւրային փշալարը վեց գիւղ կայ», որոնք պահանջում է Բաքուն: մինչդեռ Բաքուից՝ քարոզչական շրջանակներից դուրս, պաշտօնապէս Սիւնիքում վեց բնակավայրի վերաբերեալ յայտարարութիւններ չեն արուել: Բաքուն Հայաստանից պաշտօնապէս պահանջել է Տաւուշի մարզում գտնուող, այսպէս կոչուած, անկլավները:

Աղաւաղելով անգամ Պոլտինի ելույթը

Թողարկման բանախօսներից Օլեգ Բառաբանովն անդրադարձել է «վաղա» ակումբում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ ԼՂ բանակցային գործընթացի մասին յայտարարութիւններին ու աղաւաղել է դրանք: Ըստ նրա՝ Պուտինն ասել է, որ հենց Փաշինյանն է մերժել յանձնել 7

շրջանն ու ասել, որ կը կռուեն Ղարաբաղի համար:

Իրականում, Պուտինը խօսում էր Հայաստանի՝ տասնամեակներ շարունակ ունեցած դիրքորոշման մասին՝ նկատի ունենալով, այդ թուում, Հայաստանի նախկին նախագահներ Սերժ Սարգսեանին ու Ռոբերտ Բոչարեանին:

Ի դէպ, FIP.am-ն աւելի վաղ գրել էր, որ Պուտինի այս պնդումը եւս կեղծ է. Գոնէ ՀՀ նախկին ղեկավարներ Ռոբերտ Բոչարեանն ու Սերժ Սարգսեանը համաձայնուել են 5+2 ձեւաչափով յանձնել շրջանները՝ նոյնիսկ առանց ԼՂ կարգավիճակի յատկացման. լուծումները մերժող կողմը մշտապէս Ադրբեջանն է եղել:

Յօրինուածք՝ 44-օրեայ պատերազմը կանգնեցնելու պայմանների մասին

Բառաբանովը պնդել է նաեւ, թէ 2020 թուականի 44-օրեայ պատերազմի սկզբնական շրջանում պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել կանգնեցնել գործերն իրենց զբաղեցրած դիրքերում, ինչին, իբր, կողմ է եղել Ադրբեջանը, սակայն հրաժարուել է Փաշինյանը:

Սալ ամբողջութեամբ յօրինուածք է գ ուսական միջնորդութեամբ 2020 թուականի հոկտեմբերին ձեռք բերուած գինդադարի պայմանաւորուածութիւնը խախտել է հենց Ադրբեջանը՝ շարունակելով առաջխաղացումն Արցախում:

Երբ են եկել ՆԱԹՕ-ի զօրքերը

Թողարկման վարողը պնդում է, թէ 2022 թուականի սեպտեմբերեան ազրեսիայից առաջ Փաշինյանը ՆԱԹՕ-ի զօրքեր է բերել Հայաստան, ՀԱՊԿ-ի զօրախմբի փոխարէն: Իրականում, Հայաստանում Նատո-ի զօրքեր չկան, իսկ ԵՄ դիտորդական առաքելութիւնը, որին վարողը համարում է ՆԱԹՕ-ի զօրախումբ, ՀՀ է եկել սեպտեմբերեան ազրեսիայից յետոյ՝ Հոկտեմբերին՝ ՀԱՊԿ-ից օգնութեան բացակայութեան պայմաններում:

Երբ են եղել ՀայԱմերիկեան զօրավարժութիւնները

Թողարկման բանախօսներից Անդրէյ Արեշեւը աղաւաղում է 2023-ի Սեպտեմբերին մի շարք իրադարձութիւնների ժամանակագրութիւնը՝ պնդելով, որ, օրինակ, հայ-ամերիկեան զօրավարժութիւնները եղել են Սեպտեմբերի 19-ին Արցախում ադրբեջանական յարձակմանը զուգահեռ, երբ Երեւանում ընթանում էին նաեւ հակակառավարական ցույցեր. բանախօսը պնդել է, որ այդպիսով ԱՄՆ-ն իր աջակցութիւնն է ցույց տուել Փաշինյանին:

Հայ-ամերիկեան զօրավարժու-

Հայաստան-Ֆրանսա Պատմական Համաձայնութիւն

Շարունակուած էջ 1-էն

արդիականացման գործին: Նախ յոյսեր կ'ապուեցան Ռուսաստանի հետ այն ակնկալիքով որ, դաշնակից նկատուող այդ երկիրը պիտի մատակարարէ Հայաստանի անհրաժեշտ զինատեսակները: Այդ նպատակին համար ռուսական կողմին փոխանցուեցաւ կանխիկ 400 միլիոն տոլար, սակայն մինչեւ օրս զենքերը չհասան Հայաստան եւ ոչ ալ վերադարձուեցաւ այդ հսկայ գումարը:

Այդպիսով Հայաստան կորսցուց սուղ ժամանակ իր պաշտպանութիւնը ամրապնդելու համար, որուն պատճառաւ ալ Ատրպէյճան մի քան անգամ կարողացաւ ներթափանցել Հայկական տարածքներէն ներս: Այս իրադարձութիւններէն ետք է որ, Երեւան վերջնականապէս համոզուեցաւ որ, Ռուսաստանի վրայ յոյս կ'ապելը դարձած է ժամանակի կորուստ ու սկսաւ փնտռել զենատեսակներու ապահովման այլ ուղղութիւններ: Թէւ Հայկական կողմը շարունակեց լուռ մնալ այս հարցով, սակայն հնդկական մամուլին մէջ սկսան լոյս տեսնել իրապարակումներ՝ Հայաստանին վաճառուող արդիական զինատեսակներու մասին:

Յաջորդ տարուայ պիտոճէի նախագծով բանակի եւ պաշտպանութեան համար յատկացուած է 1.4 միլիար տոլար: Այս գումարը ամենէն բարձրն է անկախ Հայաստանի պատմութեան մէջ: Թէւ

Ատրպէյճանի ռազմական պիտոճէն 2.5 անգամ աւելի է Հայաստանէն, սակայն պէտք է նկատի առնել որ այդ գումարին մէկ մասը անխուսափելիօրէն պիտի մսխուի կաշառակերութեան եւ կորուպցիայի պատճառաւ:

Արդի քաղաքական գործիչ համարուողները, ինչ հոսանքի, որ անդամակցեն, մեծ ի մասամբ չունեն իրենց սեփական գաղափարի անկեղծութիւնը, քանզի գաղտնաբար յարուում են դրսից եկած զանազան արկածախնդրականների՝ սորոսականների, մասոնների եւ բազում ուրիշների: Դրանք արմատացած ստախօսներ են, որ խոստանում են մի բան եւ անում այլ, իսկ երբ խնդրը Արցախին էր վերաբերուում, ունէին միայն մէկ լուծում՝ վարչապետի անմիջական հեռացումը, մոռանալով, որ մեզ հասանելի միակ միջոցը միասին խաղաղ-դրացիական եւ ոչ վերջ չունեցող աւերիչ պատերազմների պայմաններում ապրելն է, եւ մենք այդ իրաւունքը ունենք, բայց

դրան հասնելը այլ խնդիր է, երբ նոյնիսկ եկեղեցուց փոխհրաձգութիւնը չի դադարում քաղաքական իշխանութիւնների հետ: Ի դէպ գաղտնիք չէ, որ Ապրիլ 2018-ի իշխանափոխութեան սկզբից ի վեր էջմիածինը, թէ՛ Անթիլիասը հակապետական դիրք բռնելով միացան ընդդիմադիրներին, ինչ որ տեղից եկած հրամանի համաձայն պահանջելով վարչապետի անմիջական հրաժարականը, մինչեւ իսկ մի քանի եպիսկոպոս եւ արքեպիսկոպոս կղերական հանդերձանքով մասնակցում, ելոյթ էին ունենում փողոցի ցոյցերին, այն համարելով Արցախը փրկելու միջոց, որ իրականում սեփական իր երկրի նկատմամբ դաւադրութիւն էր եւ ոչինչ ունէր կառուցողական: Տեղին է լինել նաեւ, որ Եռաբլուր պաշտօնական այցելութիւններին, հոգեւորականները չէին միանում եւ իրենց աղօթքը առանձին խմբով եւ այլ ժամի էին անում, որ երեսթեքում էր սեփական պետութիւնից եւ թերեւս ուսուցալստութիւն, քանի որ ամիսներ առաջ Պուտինը շքանշան էր կախել հոգեւոր պետի կրծքին, այնպս է, թէ ի՞նչ ծառայութեան դիմաց:

Ի վերջոյ դժբախտաբար Արցախի վախճանը եղաւ ողբերգական եւ Ալիեւը Ստեփանակերտում ցցեց իր երկրի դրօշը, բայց աղմկարար փրկարարները լուռ մնացին եւ ոչ մէկ մասնակցութիւն չունեցան բռնի տեղահանումներին օգտակար լինելու, բայց միեւնոյն կեղծ պաթոսով Մոնթրէլայի մէջ՝ «Տէր կանգնինք Արցախին» կարգախօսով զօրակցական հաւաք արեցին՝ կեցցէք: Կարելի էր աւելի խելամիտ լինել:

STARTING OCTOBER 13 2023

PAINTING CLASS

1st Session Free

Every Friday
5 PM - 6 PM

Teacher Rita Shahinian

1060 ALLEN AVENUE PASADENA, CA 91104

REGISTER NOW

STARTING September 18th

By Calling to
+1(626) 681-9455

\$ 30 FEE / Month

Instagram.com/norserountlosangeles
facebook.com/norserountculturalassociation

MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry

Տոթթ. Մհեր Պապեան
Ատամնաբոյժ

1111 S. Glendale Ave., Suite 206
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
Fax: (818) 547-9360

ՀԱՂԽ-ի Յայտարարութիւնը Ի Խնդիր Արցախահայուքեան



Առաջին շաբթ ծախեմ աջ՝ Վեր. Ալպերթ Փայտեան, Վեր. Դոկտ. Յարութիւն Սելիմեան, Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան, Դոկտ. Նազարեթ Տարագճեան, Տիար Զաւէն Խանճեան եւ Վեր. Յովել Միքայէլեան:

Երկրորդ շաբթ ծախեմ աջ՝ Կալվին Սաղըրեան, Վեր. Հենրիկ Շահնազարեան, Վեր. Դոկտ. Րոնէ Լեւոնեան եւ Վեր. Յովհաննէս Յովսէփյան:

Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի (ՀԱՀԽ-ի) Գործադիր Յանձնախումբին ժողովը գումարուեցաւ Հոկտեմբեր 19-20, 2023-ին Սան Ֆրանսիսկոյի Գողթաթա Հայ Աւետարանական Եկեղեցւոյ մէջ:

Սոյն երկօրեայ ժողովին մասնակցեցան ՀԱՀԽ-ի եօթը եկեղեցական Միութիւններու եւ Կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Օրակարգի գլխաւոր նիւթերէն մէկն էր Արցախի գրաւումը Ատրպէյճանի կողմէ եւ Արցախահայութեան տեղահանութիւնն ու Հայաստան հաստատուելու իրականութիւնը: Յետ խորհրդակցութեան, Գործադիր ժողովը ըրաւ հետեւեալ յայտարարութիւնը.՝

Ընթացիկ տարուան Սեպտեմբերին Արցախի Հանրապետութեան վրայ Ատրպէյճանի զանգուածային յարձակումին հետեւանքով ամբողջ Արցախահայութիւնը ենթարկուեցաւ համատարած տեղահանութեան, սկսած մայր լքելով իր դարաւոր հայրենիքը:

Արցախի բռնագրաւումը մեր նորագոյն պատմութեան չարագիտ իրականութիւններէն մէկն է: Հայկական Յեղափոխութեան նման հայ ժողովուրդը անգամ մը եւս ենթարկուեցաւ պատմական Հայաստանի կարեւոր մէկ բաժինի կորուստին: Քաղաքակիրթ ազգեր եւ միջազգային հանրութիւնը անտարբեր մնացին կամ բաւարարուեցան միայն դատապարտումի պարզ կոչեր ընելով:

Հասկնալի է հայ ժողովուրդին վրդովանքն ու յուսախաբութիւնը ի տես այս անսպասելի իրողութեան: Անտարակոյս, մեր նորագոյն պատմութեան մէջ ճակատագրական ժամանակաշրջան մը կը բացուի մեր առջեւ, որոնք ոչ միայն Հայաստանը, այլ ամբողջ ազգը լուրջ մարտահրաւերներու առջեւ կը դնեն:

Պատմական այս հանգրուանին մեր ժողովուրդի անմիջական հրատապ հարցն է Արցախահայութեան տեղափոխումը Մայր հայրենիքի մէջ:

Կը հաւատանք, որ մեր համագրգային առաջնահերթ պարտականութիւններէն մէկն է օգնութեան ձեռք կարկառել Արցախի մեր հայրենակիցներուն:

Իբրեւ հայ ազգի գործօն մէկ մասնիկը՝ Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդը (ՀԱՀԽ-ը) իր անվերապահ զօրակցութիւնը

կը յայտնէ Արցախի մեր հայրենակիցներուն եւ կոչ կ'ընէ բոլոր հայրողիներուն.՝

Յարգանքով խոնարհիլ Արցախի հայ նահատակներու յիշատակին առջեւ.

Պրկաբաց ողջունել մեր գաղթական եղբայրներն ու քույրերը Մայր Հայրենիքի մէջ.

Ամօքել իրենց ցաւը սիրով եւ կարեկցութեամբ.

Ձանալ բարձր պահել իրենց արժանապատուութեան զգացումը.

Մեր նիւթական եւ բարոյական աջակցութիւնը ընծայել նուիրումով եւ նախանձախնդրութեամբ.

Դատապարտել ապօրինի կալանաւորումը Արցախի Հանրապետութեան նախկին եւ ներկայ ղեկավարութեան, Գնահատանքի եւ երախտիքի տուրք ընծայել անոնց նուիրումին, ծառայութեան եւ զոհաբերութեան համար.

Մեր յուսախաբութիւնն ու ընդվզումը յայտնել միջազգային ընտանիքին, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան, Արեւմտեան ազգերու կրաւորական անտարբեր դիրքին նկատմամբ Արցախի դէմ եղած անիրաւութիւններուն, ռազմական յարձակումներուն եւ բռնարարքներուն համար.

Բողոքել Միացեալ Ազգերու Կազմակերպութեան եւ Միջազգային Արդարութեան Ատեանին՝ պատերազմական հայ գերիներու հանդէպ Ատրպէյճանի անմարդկային եւ անխիղճ վերաբերումին մասին, եւ պահանջել անոնց անյապաղ ազատ արձակումը.

Նեցուկ կանգնել Հայաստանի Հանրապետութեան եւ մեր նպաստը բերել մեր Հայրենիքի վերելքին եւ պետականութեան հիմքերու ամրացման.

Կոչ կ'ողղենք մեր բոլոր ազգակիցներուն, որ զօն ու պատրաստ ըլլան, որ ամէն մէկը իր կարողութեան չափով օգնէ իր Արցախահայ եղբայրներուն եւ քույրերուն:

Ժամանակն է նաեւ, որ հայրենաբնակ եւ սփիւռքի հայութիւնը միակամ ոգիով իրենց գործնական ներդրումներու եւ միջոցներու ամբողջական տրամադրումով՝ սատարեն հայ ժողովուրդի ներկայ գաղթականական ճգնաժամի յաղթահարումին:

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան
Գործադիր Տնօրէն, ՀԱՀԽ-ի

«Հայ ֆիլմ 100-ամեակ» Ֆիլմի նոթաներուն Աստուածները

Ֆիլմարուեստին մէջ ոչինչ պատահական եւ ինքնանպատակ է. հանդիսատեսին ամէնէն աւելի հաճելի են այն ֆիլմերը, որոնց մէջ չկայ պակասող օղակ, այսինքն՝ ֆիլմը կ'ընդունուի իր ամբողջութեան մէջ՝ սկսած դրամատուրգական հենքէն, վերջացուցած՝ երաժշտութեամբ:

Կը ներկայացնենք հայ ֆիլմին երաժշտական թեւեր տուած երեք երաժշտահայ:

Ամենայն Հայոց Երգահան Խաչատրեանը

Արամ Խաչատրեանը գրած է երաժշտութիւն 25 հայկական ֆիլմերու համար: Անոր երաժշտութեան բեմելը հայ ֆիլմին մէջ «Պեպօ» ֆիլմին համար գրած երաժշտութեամբ էր: 1937-ին երաժշտութիւնը գրած է «Ձանգեզուր» ֆիլմին համար, որ կը պատմէ հայ ժողովուրդին մղած յեղափոխական-ազատագրական պայքարի մասին: Ֆիլմին յայտնի երաժշտական համարներէն է «Ձանգեզուր» ի երաժշտութեան որոշ սկզբունքներ հետագային արտայայտուած են Զուլթակի համանուագին, «Սպարտակ» պալետին եւ այլ ֆիլմերու համար գրուած երաժշտութիւններուն մէջ:

«Ես յաջողութեան հասած եմ այն գործերու մէջ, որոնց մասին շատ խորհած եմ: Կարելի չէ յօրինել երաժշտութիւն, որ չես զգացած. կեանքիս մէջ ունեցած բոլոր ապրումները արտացոլուած են երաժշտութիւններուն մէջ:


«Գրելու մէջ ազատ եմ, երբեմն օրական 16-17 ժամ կ'աշխատիմ: Կը գրեմ այնպէս, ինչպէս կը հասկնամ, մինչեւ գործը չաւարտեմ, չեմ իմանար թէ ինչ դուրս կու գայ», ըսած է Արամ Խաչատրեան:

Արամ Խաչատրեան 1935 թուականին Սովետական Միութեան պատանւներուն ցուցադրուեցաւ «Պեպօ» ֆիլմը, որուն երաժշտութիւնը գրած էր Արամ Խաչատրեանը:

«Պեպօ»-ի սրտառուչ, արտայայտիչ երգը դարձած է երաժշտահային լայն ժողովրդայնութեան աւետիսը: Այս երգը առանձնապատուկ յաջողութիւն ունեցած է Անդրկովկասի մէջ: Այն թափանցած է ժողովրդական զանգուածներուն ամենախորքերը, փոխանցուած է շուրթէ շուրթ, ապրած է զանազան տարբերակներով՝ որպէս սեփական ժողովրդական երգ: Առանձին գոհունակութեամբ պէտք է նշեմ, որ Արամ Խաչատրեանի գրած ինքնատիպ երաժշտութիւնը իր ոճով ամբողջութեամբ կը ձուլուէր ժողովրդական մեղեդիներու հետ, իսկ իր արտայայտչականութեամբ նոյնիսկ անոնցմէ աւելի հարուստ էր»՝ ըսած է Համօ Բեկնազարեան:

Ֆիլմի նկարահանման շրջանին Համօ Բեկնազարեանը կ'ապրէր Երեւան՝ «Ինտուրիստ» պանդոկը: Արամ Խաչատրեանը, որ ժամանակ առ ժամանակ կ'երթար Երեւան՝ երաժշտական կտորները բեմադրիչին հետ համաձայնեցնելու համար, նոյնպէս այդտեղ կ'իջեւանէր:

Դաշնամուրին առջեւ նստած՝ երաժշտահային լուսաշող աչքերը կը վառին ոգեւորութեան: Ան ամբողջութեամբ կը նմանէր երի-




տասարդ կաղնիի, որուն մէջ արդէն կարելի է կռահել անոր ապագայ հօր հասակին ամբողջութիւնն ու գեղեցկութիւնը: Նկարահանող խումբը երկար ժամանակ լուռ կ'ունկնդրէր անոր հիւանալի նուագը...

«Իսկ ինքը՝ որպէս իսկական արուեստագէտ, հագուադէպ գոհ կ'ըլլար իր գրածէն: Յամառօրէն ու ոգեւորութեամբ ան կ'որոնէր երաժշտութեան ու պատկերին առաւելագոյն միասնութիւն: Այսպէս, օրինակ, անոր բաւարարեց «Պեպօ»-ի երգին միայն եօթներորդ տարբերակը: Երբ իմ հիւանդութեան ցաւերը կը հանգստանային, մենք Խաչատրեանի հետ միասին կ'երթայինք պանդոկները եւ այնտեղ կը լսէինք Սազանդարներու նուագը (արեւելեան նուագախումբի թրիօ): Կը ինդրէինք մեզի համար հին երգեր երգել: Կը յիշեմ՝ Արամ Խաչատրեանը ալ գրի կ'առնէր մեր հաւնած մեղեդիները», իր յուշերուն մէջ գրած է Համօ Բեկնազարեանը:

Պեպօյին երգը խորապէս ժողովրդական է եւ կ'ըմբռնուի որպէս ժողովրդական: Այդպիսին են նաեւ Խաչատրեանի լաւագոյն մեղեդային թեմաները անոր երգերուն, համանուագներուն, պալետներուն եւ սիմֆոնիաներուն մէջ՝ միշտ միջավայրի ծնունդ եւ միշտ տարբերուող իրենց դէմքերու արտայայտութեամբ:

Հնչիւններու Արքայ Մանուկեանը



Տիգրան Մանուկեանը առանձնապատուկ տեղ կը զբաղեցնէ հայ ֆիլմի երաժշտութեան մէջ, որ վերջինիս համար շատ հետաքրքրական, իր ուրոյն երանգաւորումը ունեցող բնագաւառ է: Իւրաքանչիւր սենար, իւրաքանչիւր ֆիլմ անոր համար հանելուկներու շղթայ մըն է, որոնց լուծումը ան փորձած է գտնել իր երաժշտութեան միջո-

«Կարապի Լիճը»՝ Կանուրջ Աւելի Բարդ Ներկայացումների Համար. Բալետը Շուքով է Վերադարձել Երեւանի Օպերային Թատրոն



ԱՆԺԵԼԱ ՀԱՍԲԱՐՉՈՒՄԵԱՆ

Աւելի քան երեսուն տարուայ դադարից յետոյ Ալ. Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմում «Կենդանութիւն են առել» Պիոտր Չայկովսկու կարայները: «Կարապի լիճը» հանրայալ բալետը, առանց որի հնարաւոր չէ պատկերացնել աշխարհի որեւէ հեղինակաւոր թատրոնի խաղացանկ, Երեւանի օպերային թատրոնում բեմադրուած է հինգերորդ անգամ՝ նոր շնչով, նոր ոգով ու բեմադրական լուծումներով:

Հոգեթով երաժշտութիւն, յուզիչ պար, շքեղ կոստումներ եւ ուժեղ էներգիա. բալետի առաջնա-

ւանի օպերային թատրոնում, երկու սերունդ չի պարել այն, հանդիսատեսի երկու սերունդ այն չի տեսել:

Առաջնախաղերի բոլոր տոմսերն արագ սպառուած են, ինչն ուրախացնում է Կարէն Դուրգարեանին, բայց թատրոնի տնօրէնը լիարժէք գոհ չէ: Ասում է՝ նրա պարտականութիւնն է պահանջ-կոտ լինել, սակայն հասկանում է, որ թատրոնն ու թատերախումբն աշխատում են ուժերի ներածին չափով: «Դա թոյլ է տալիս իմանալ, թէ որ աստիճանի վրայ ենք մենք եւ ուր պէտք է գնանք: Մեր թատրոնն առաջընթաց ապրել է, եթէ առաջընթաց չլինէր, «Կարապի լիճը» չէր բեմադրուիր»,-



խաղերն անցնում են լեփ-լեցուն դահլիճներում արուեստասէրների բուռն ծափահարութիւնների ներքոյ:

«Արմենպրես»-ի թղթակիցի հետ զրոյցում թատրոնի տնօրէն Կարէն Դուրգարեանը նշում է՝ ներկայացումը նուաճում է Երեւանի օպերային թատրոնի համար. այն կամուրջ է դառնալու չեստագայում աւելի բարդ ներկայացումներ բեմադրելու համար:

Բեմադրութեան գեղարուեստական ղեկավարը Վրաստանի եւ Ռուսաստանի ժողովրդական արտիստ Նինօ Անանիաշվիլին է: Դուրգարեանը նրան է հրաւիրել, քանի որ Վրաստանի բալետն անցել է այն ճանապարհը, որ անցնում է Երեւանի թատրոնը: «Անանիաշվիլիի օգնութեամբ հրաւիրել ենք նաեւ Մեծ թատրոնի պարուսույցների, որոնք մեզ օգնել են վերականգնել դասական բալետի աւանդոյթները, որ մի փոքր կորցրել ենք», -ասում է Կարէն Դուրգարեանն ու յաւելում՝ երեսունհինգ տարի «Կարապի լիճը» չի բեմադրուել Երե-

ւանի օպերային թատրոնում:

«Կարապի լիճը» բալետի հիմքում գերմանական հեքիաթն է, որում արքայազն Ջիգֆրիդը սիրահարուած է արքայադուստր Օդետային, որին չար կախարդը կարապի է վերածել: Արքայազնը Օդետային յաւերժ սէր է խոստանում, սակայն ամրոցում հանդիպում է Օդիլիային: Նրան նմանեցնելով Օդետային՝ Ջիգֆրիդն Օդիլիային է նախապատուութիւն տալիս:

Օդետայի, Օդիլիայի կերպարները կերտել է թատրոնի առաջատար մենապարուհի, ՀՀ վաստակաւոր արտիստ Մերի Յովհաննիսեանը: Նա, ինչպէս շատ պարուհիներ, կարապի դերը կերտելը երազանք է համարել: «Թուած էր՝ այդ երազանքը չի կատարուելու: Իրականում շատ դժուար է խաղալ ներկայացման մէջ, որում երկու հակասական կերպարներ են կերտուած: Նման դէպքում միշտ մի դերն աւելի հոգեհարազատ է դառնում: Ինձ աւելի հոգեհարազատ է Օդիլիայի՝ սեւ կարապի դերը, սակայն ես շատ աւելի աշխատել եմ Օդե-

տայի կերպարի վրայ: Դժուար է, բայց հաճելի», -խոստովանում է պարուհին:

Նախագծի գեղարուեստական ղեկավար Նինօ Անանիաշվիլին շատ տարիներ առաջ փայլուն կերտել է Օդետայի եւ Օդիլիայի կերպարները: Մերի Յովհաննիսեանը չի փորձել նմանուել նրան, չի փորձել գերազանցել: Կարծում է՝ իւրաքանչիւր պարող իւրապատու է: «Ամէն պարուհի ունի իր առաւելութիւնները. մէկի ոտքերն են գեղեցիկ, միւսի՝ ձեռքերը: Անանիաշվիլիի հետ աշխատանքը մեզ համար մեծ ձեռքբերում էր: Նա շատ պահանջկոտ, հետեւողական է եւ անհատական մօտեցում էր ցոյց տալիս», -ասում է Մերին:

մար:

Օպերային թատրոնի առաջատար պարող, ՀՀ վաստակաւոր արտիստ Սեւակ Աւետիսեանը վնասուածքի պատճառով շուրջ ինն ամիս բեմ չէր բարձրացել: Նա անհանգիստ էր, լի պատասխանատուութեան մեծ զգացումով եւ յոյսով, որ կը ներկայանայ լիարժէք եւ մեծ բաւականութիւն կը պատճառի արուեստասերներին: Դա նրան յաջողուեց:

«Մա հեքիաթային ներկայացում է: Շատ ներկայացումներում եմ որպէս արքայազն պարել, բայց Ջիգֆրիդն այլ է: Գեղեցիկ ստեղծագործութիւն է. արքայազնը գնում է որսի, հանդիպում գեղեցիկ աղջկայ, պարզուած է՝ նա



Նրա խօսքով՝ այն հանգամանքը, որ ներկայացումների տոմսերը սպառուած են, խօսում է այն մասին, որ հանդիսատեսը շատ է սիրում բալետ, անգամ գիտի, թէ որ օրը որ արտիստներն են պարում եւ թատրոն է գալիս իր նախընտրած արտիստների մատուցմամբ բալետը վայելելու հա-

կարապ է: Այս ամէնը պարով պատմելը հետաքրքիր զգացողութիւններ է առաջացնում, շատ իւրայատուկ ու նոր», -անկեղծանում է Աւետիսեանը: Նա կարեւորում է նաեւ հանդիսատեսի էներգետիկան ու նշում՝ երբ տեսնում

Շար.ը էջ 15

Z.U.U. HOMENMEN 19 Homenmen Ladies Auxiliary

BINGO Backgammon Game Night

Games - Fun - Food

Friday, November 3, 2023
8 PM

1060 N. Allen Ave. Pasadena, CA. 91104

Tickets : \$35

Serving home made Madzunov Kufta with Rotisserie Chicken!

Արեւմտեան Թեմի Հոգեւորականներու Տարեկան Երրորդ Աղօթածողովը



ԱՄՆ Արեւմտեան Թեմին մէջ, օրհնութեամբ ու նախագահութեամբ բարեջան առաջնորդ, գերաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանի, տարին 3 անգամ՝ զարնանը, ամրանը եւ աշնանը տեղի կ'ունենան հոգեւորականներու ժողովներ: Այս տարուայ վերջին աւանդական հաւաքը տեղի ունեցաւ 2023 թ.-ի Հոկտեմբերի 17-ին, ուր ներկայ էին 36 հոգեւորական եւ առաջնորդարանի ողջ աշխատակազմը: Բանաւոր պատճառներով կը բացակայէին 11 հոգեւորականներ:

Տակաւին առաքելական շրջանին սկսած սրբազան աւանդութիւն եղած է, որ բոլորը միասնաբար հաւաքուին եւ կատարեն ոչ միայն Տիրոջ պատգամները, այլ միաբանութեան ոգով եւ աստուածային սիրով աջակից ըլլան իրարու: Արեւմտեան Թեմը ըլլալով առաքելաշաւիղ եւ Քրիստոսահիմն եկեղեցւոյ ժառանգորդ՝ իր հայեացքը անխախտ յաւանդեց Ս. Էջմիածնէն ճանաչող կենարար փարոսին, կ'իրականացնէ իր առաքելութիւնը՝ ի սէր Արարչին եւ մեր ժողովուրդին:

Օրը յագեցած էր աղօթական, բարեպաշտական, հոգեմտաւոր եւ մշակութային անդրադարձումներով, որովհետեւ նման հաւաքները անհրաժեշտ են ամրացնելու հոգեւոր կապը Թեմին մէջ ծառայող հոգեւորականներու հետ, միեւնոյն ժամանակ առիթ կը ստեղծէ նաեւ փորձի փոխանակման: Աւանդական աղօթքն յետոյ, բարեգալստեան եւ օրհնութեան իր խօսքին մէջ, առաջնորդ, Սրբազան հայրը նշեց. «Աշակերտներ ենք Քրիստոսի եւ ժառանգորդները մեր նախնեաց հաւատքին, որով եւ մեր բոլորին վրայ կը դրուի ծանր, այնուամենայնիւ բազմաբար պարտականութիւն:

Բոլորս ալ քաջ գիտենք, որ դժուարին եւ փորձութիւններով լեցուն ժամանակներ կ'ապրինք, առաւել եւս կը ցաւինք մեր հայրենական կեանքն ներս առկայ բարդ խնդիրներով: Մեր առջեւ դրուած հրամայականը այն է, որ հաւատքով մշտարթուն, ի գին ամէն գոհողութեան մեր բարի գործերով ու ներշնչող պատգամներով ոչ միայն մեր ծուխերը պահենք, այլեւ մշտապէս մեր հայեացքն ուղղենք դէպի Հայաստան Ս. Էջմիածին: Ներքին անմիաբանութիւնը եւ՝ եկեղեցւոյ մէջ, եւ՝ հայրենի երկրէն ներս իրօք կը քայքայէ մեր խաղաղ կեանքի ընթացքն ու բարգաւաճումը: Այս եւ տակաւին բազում այլ փորձութեանց տոկալու համար խիստ անհրաժեշտ է աղօթքի կեանքը, համբերութեամբ առնուած քայլերը, որպէսզի միասնաբար դառնանք լոյսի եւ յոյսի փարոսը մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Մեր աղօթքն է առ Աստուած, որ բոլորս առաջնորդէ դէպի նոր կեանք եւ առաւել եւս մտածելու ու խոնկալու քահանայութեան մեծ խորհուրդի մասին: Բոլորս անխտիր անհատապէս եւ հաւաքականօրէն, որպէս եղբայրութիւն չմոռնանք, որ հաւատացելոց հոգեւոր աչքերը մեր վրայ են կեդրոնացած:

Ուրեմն պիտի ըլլանք չափազանց աշալուրջ ու հետեւողական, որպէսզի Աստուծոյ սիրով ու Քրիստոսի իմաստութեամբ զօրացած, մէկգմիւսին զօրավիզ տէրը կանգնինք մեր հօտին եւ միասին կերտենք փառաւորեալ եկեղեցին»:

Խօսքի աւարտին Յովնան սրբազանը մաղթեց, որ աղօթահաւաքի մասնակիցները հոգով նորոգուած ու եռանդով գօտեպնուած վերադառնան իրենց ծխական համայնքները:

Ներքին կազմակերպութեան հարցերու մասին զեկուցեց առաջնորդարանի տնօրէն, բարեշնորհ Յարութ սարկաւազ Մարգարեանը՝ կարեւորելով միասնական թուային ծխամատեաններ ստեղծելու անհրաժեշտութիւնը:

Հոգեպարար օրուայ առաջին մասը բաղկացած էր 3 հիմնական արժէքաւոր բանախօսութիւններէ: Յաջորդաբար հանդէս եկան արժանաշնորհ Տ. Աւետիս քահանայ Աբովեանը, որը համակողմանի քննութեան ենթարկեց քահանայի ինքնութեան հարցերը, ապա արժանապատիւ Տ. Եղիշէ քահանայ Քեսաչիկեանը անդրադարձաւ եկեղեցականի ամէնօրեայ վերանորոգման անհրաժեշտութեանը, իսկ հոգեւոր Տ. Տաճատ Ծ. վարդապետ Եարտմեանը բանաձեւեց քահանայ եկեղեցականի հոգեղէն կառուցը, ինքնութիւնը, դիմագիծը՝ եկեղեցական առաքելութեան մէջ: Ան տիպիկ զուգահեռներ գծեծ Ս. Ներսէս Շնորհալիի խրատներուն, հայրաբանական ու աստուածաբանական գրականութեանը:

Հաւաքի առաջին մասը ամփոփեց առաջնորդ, բարձրաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանը, մասնաւոր գնահատելով օրուայ հիմնական բանախօսներուն, մասնաւորապէս ընդգծեց. «Ինչպէս որ ամէն անգամ ջուր կը խմենք՝ հագեցնելու մեր ծարաւը, այնպէս ալ նման թեմաներու վերաքաղը անհրաժեշտ է, որպէսզի անով եւս վերանորոգենք ինքներս մեզ, մեր կոչումը, ուխտը»: Սրբազան հայրը ընդգծեց հոգեւոր կեանքի մշտական նորոգութեան մասին: Առաջարկեց մէկ գրքոյկով մէկտեղել նման խորհրդածութիւնները, որպէսզի տպագրուին: Այն վստահաբար օգտակար կ'ըլլայ ապագայի եւ այլ վայրերու մէջ ծառայող հոգեւոր

սպասաւորներուն:

Հայրենիքի առջեւ ծառայած տիտղոս մարտահրաւէրներու մասին խօսելով, առաջնորդ Յովնան սրբազանը համառօտ ներկայացուց նաեւ մեր Բնօրրանին, Արցախին, իսկ այսօր տարագիր արցախահայրութեանն ուղղուած թեմական ովկիանոսածաւալ նախաձեռնութիւններու մասին, յաւելելով, որ յառաջիկայում պատուիրակութիւն մը պիտի մեկնի Հայաստան, որպէսզի հանդիպին արցախահայրուն եւ շարունակեն կազմակերպել մշտական աջակցութիւնը:

Սրբազանը իր խօսքին մէջ անրադարձաւ նաեւ եկեղեցականներու պատրաստութեան հարցին:

Օրուայ երկրորդ մասը վերոնշեալ դասախօսութիւններուն վերաբերող բոլոր քննարկումներն էին, որտեղ կը գերիշխէր առողջ տրամաբանութիւնը եւ եղբայրական հասկացողութեան, միաբանութեան ոգին:

Թեմի երախտաւոր հոգեւորականներէն, արժանապատիւ Տ. Զենոբ աւագ քահանայ Նալբանդեանը համառօտ գծերով խօսեցաւ

փորձառութեամբ: Ապա ներկայ հոգեւորականներուն ու հաւատացեալ ժողովուրդին իր պատգամը փոխանցեց արժանապատիւ Տ. Զաքարիա քահանայ Սարիբեկեանը: Կուռ կառուցուածքով ըսելիքը մատուցեց պարզ ու հասկանալի լեզուով՝ հիմնուելով սեփական փորձառութեան վրայ: Յիշատակելով համազգային մտահոգող խնդիրները՝ տէր հայրը ընդգծեց միասնութեան եւ միաբանութեան անհրաժեշտութեան մասին, նշելով, որ «Արցախի կորուստը մեր բազմաթիւ երազներու խորտակումն էր, բայց ոչ երբեք՝ ապագայի»: Ապա զուգահեռներ գծելով պատմական անցեալի հետ՝ Տէր Զաքարեան աւելցուց, որ «387 թ.-ին կորսնցուցինք մեր պետականութիւնը, որուն յաջորդեց Ոսկէ դարը: Այս հանգամանքը կը նշանակէ, որ հիմա ալ պէտք է վերածնինք, որպէսզի պատրաստուինք վաղուայ, լուսաւոր փառքին ու պայծառ ապագային՝ միեւնոյն ժամանակ վերագտնենք ինքներս մեզ եւ բնակինք Աստուծոյ ներկայութեան մէջ»:



իր նոր լոյս տեսած, ստուարածաւալ, բացառիկ աշխատութեան՝ «Փրանսերէն-Հայերէն-Անգլերէն» եկեղեցական բառարանի մասին, որը մեր իրականութեան մէջ եզակի գործ է: Տէր հայրը հատորէն սիրով նուիրեց իր ծառայակից եղբայրներուն:

Աւանդութեան համաձայն, ներկաները ստացան նաեւ Թեմի վերջին հրատարակութիւններէն, որոնք հեղինակած էին Տ. Յովնան արք. Տէրտէրեանը, Տաճատ Ծ. վրդ. Եարտմեանը եւ Գէորգ սրկ. Գէորգեանը:

Երեկոյեան ժամերգութեան աւարտին իր խորհրդածութիւնները եւ հոգեւոր պատգամը փոխանցեց հոգեւոր Տ. Երեմիա վարդապետ Աբգարեանը: Հիմնվելով օրուայ սրբազան շարականագրի պատգամին՝ «Քրիստոսի աշակերտի» նմանողութեամբ, հայր սուրբը ներկաները առաջնորդեց դէպի աստուածաշնչեան պատմութիւններու եւ սրբազան աւանդութեան խորքերը՝ յորդորելով նորոգուած ու մշտարթուն գիտակցութեամբ քայլել դէպի Բարին ու կատարեալը:

Օրուայ վերջին մշակութային մասը բացուեցաւ Հայր Տաճատի ինքնատիպ գեկոյցով, որ լեցուն էր հոգեւոր կեանքի, պրպտող գիտնականի ու դաստիարակի հարուստ


Երեկոյն սրտայոյզ շարականներով զարդարեցին Ս. Ղեւոնդեանց «Շնորհալի» երգչախումբը, ապա արժանապատիւ Տ. Խաժակ քահանայ Շահբաղեանը ներկայացուց Յովնան սրբազանի օրհնութեամբ Նոյեմբերի 15-ին տեղի ունենալիք «Մէկ ժամ կոմիտասի հետ» ծրագրուող բացառիկ համերգի մենակատար Էդգար Խաչատրեանին, որ «Հորովել»-ի կատարմամբ հիացուց ներկաները:

Օրը ամփոփեց առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանը, ընդգծելով, որ եթէ պահ մէկ բառակապակցութեամբ փորձենք բնորոշել, կ'ըլլայ. «Խոնարհութիւն պարտադրող երեկոյ էր», ապա Սրբազանը նշեց, որ ողջ օրուայ ընթացքին առիթ ունեցած է մտքով տեղափոխուելու մինչեւ մանկութիւն, վերալիցքաւորուել եւ վերանորոգուել Քրիստոսով: «Կեանքը մշտական գողգոթայ է, պէտք է ընկրկիլ, այլ պէտք է շարունակել պայքարիլ եւ այդտեղ գտնել ինքներս մեզ, ուր որոշակի կարեւոր է նաեւ քահանայի արժէքը եւ առաքելութիւնը»:

Յագեցած օրը խորհրդանշական ձեւով աւարտեցաւ Թեմի ամենաերիտասարդ հոգեւորականի՝ արժանապատիւ Տ. Նժդէհ քահանայ Քէշիշեանի «Պահպանիչ» աղօթքով:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
 Masis2@earthlink.net (626) 797-7680

«Դալնայի Այգիներ» Դնավայրի Դնձանը Կը Վերականգնուի



Պատմամշակութային ժառանգութեան գիտահետազոտական կեդրոնը, մասնաւորի հետ համագործակցութեամբ, 2023-ի Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներին պեղումներ է իրականացրել «Դալնայի այգիներ» անուամբ յայտնի հնավայրի՝ 19-րդ դ. առաջին քառորդում կառուցուած հնձաններից մէկում (հնագէտ՝ Արման Նալբանդեան), որոնց արդիւնքում բացուել է անխաթար մնացած մշակութային շէրտ: «Արմենպրես»-ն այս մասին տեղեկացաւ կերոնի «Ֆէյսբուք»-ի էջից: «Կառուցն ամբողջութեամբ ծածկուած էր փլատակներով եւ աղբով: Աշխատանքները ընթաց-

քում ոչ միայն մաքրուեց հնձանն ու հեռացուեցին հարիւրաւոր թափուած քարեր, այլեւ պեղուեց անխաթար մնացած մշակութային շէրտը, որի արդիւնքում հնձանի ներսում բացուեցին կրասավաղ յատակը, գինին պահելու հորը, տաքարը, առուակոսը եւ հաւանական է, նաեւ առագաստը: Գտնուեցին 18-20-րդ դդ. խեցեղէնի բազմաթիւ բեկորներ, այդ թւում՝ ջնարակուած, մետաղական տարբեր առարկաներ», - ասում է հաղորդագրութեան մէջ: Ըստ աղբիւրի՝ առաջիկայում նախատեսուած են հնձանի վերականգնման աշխատանքներ:

«Կարապի Լիճը»՝ Կամուրջ

Շարունակուած էջ 11-էն

է, որ դահլիճը լեփ-լեցուն է, աւելի է ոգեւորուած, ցանկանում է աւելին անել, քան կարող է: Վստահաբար կան մարդիկ, որոնք «Կարապի Լիճը» բալետն ամբողջութեամբ չեն դիտել, սակայն քաջածանօթ են ներկայացման փոքր կարապներին ֆիլմերի, մուլտֆիլմերի, այլ ներկայացումների միջոցով: Նրանց պարը բալետի կարեւոր հատուածներից է: Փոքր կարապներից Նելլի Մելքոնեանը նշում է՝ իրենք սիրուած են, եւ հանդիսատեսը սպասում է կարապների պարին: «Մենք լրջագոյնս պատրաստուել ենք ներկայացմանն ու յոյս ունենք, որ լաւ ենք ներկայանում: Իւրաքանչիւրս մեր դերին ենք համապատասխանում ու սիրով ենք պարում, սակայն ցանկացած պարուհի էլ երազում է Օդետայի դերի մասին», - ասում է պարուհին, իսկ Վահէ Բաբաջանեանը, որը կերտում է արքայազնի ընկերներից մէկի դերը, երազել է «Կարապի

լիճը» բալետում ընդգրկուելու մասին: Երջանիկ է, որ նման հնարաւորութիւն ունի: Պիոտր Չայկովսկին «Կարապի Լիճը» բալետը գրել է 1876 թուականին: Ներկայացման բեմական պատմութիւնը դժուար է ընթացել: Առաջնախաղը տեղի է ունեցել 1877 թուականի Մարտի 4-ին Մոսկուայի Մեծ թատրոնի բեմում: Խորեոգրաֆիան իրականացրել է բալետմայստեր Վենցել Ռեյզինգերը: Օդետայի եւ Օդիսիայի առաջին դերակատարը եղել է Պոլինա Կարպովան: Ռեյզինգերի բեմադրութիւնը յաջողութիւն չի ունեցել: 1882 թուականին բալետմայստեր Իոսիֆ Հանսենը մասնակի խմբագրել է հին ներկայացումը եւ 1894 թուականի Փետրուարի 17-ին առաջին անգամ ներկայացուել է «Կարապիներ» արարը բալետի 2-րդ գործողութեան մէջ նուիրուած՝ Պիոտր Իլյիչ Չայկովսկու յիշատակին: Լուսանկարները՝ ԳԷՈՐԳ ՊԵՐԿՈՒՊԵՐԿԵԱՆԻ

«Հայ ֆիլմ 100-ամեակ»

Շարունակուած էջ 12-էն

Եւ բազում այլ ֆիլմերու համար:

ցով: Որեւէ ֆիլմի մէջ անորսալի կապեր կան տեսարանի եւ երաժշտութեան հնչիւններուն միջեւ, նուրբ հոգեբանական կապեր, որոնք երաժշտութեան առջեւ շատ որոշակի պահանջներ կը դնեն: Իր ֆիլմի երաժշտութիւնը Մանսուրեան գրած է ոչ բեմադրիչին պատմածով կամ ներկայացուցածով, ան ամէնէն առաջ ուցած է պարզել երաժշտութեան գոյնը, այսինքն՝ թէ ինչ գործիք պէտք է օգտագործել տուեալ ֆիլմին համար:

Սկզբնական շրջանին երիտասարդ երաժշտահանը երաժշտութիւն գրած է միայն վաւերագրական ֆիլմերու համար: Անոնցմէ են «Յաղթանակի օրը ընկերներու հետ», «Հայոց հողի գոյնը» եւ «Քարը» աշխատանքները:

1960-1970-ական թուականներուն նկարահանուած շարք մը ֆիլմերու մէջ բեմադրողները ձգտած են երաժշտութիւնը «տնտեսել»:

Այդ ֆիլմերէն էր «Մենք ենք, մեր սարերը», ուր երաժշտական շեշտադրումներ ընելու կամ յուզական յատուկ միջոցներ ստեղծելու անհրաժեշտութիւն չկար:

«Այս խիստ «դիմանկարային» ֆիլմին մէջ երաժշտութիւնը հերոսներու՝ միմեանց նկատմամբ ունեցած փոխադարձ կապի ու նաեւ վերաբերմունքի մէջ է: Ֆիլմին մէջ չկայ, ինչպէս կ'ըսեն, բաց տարածութիւն, իսկ օգտագործուած դրու ազներն ալ, իրենց պաստառային տեւողութեամբ, այնքան կարճ են, որ հանդիսատեսը չի հասցներ «յարմարիլ» երաժշտութեան», ըսած է Տիգրան Մանսուրեան:

Անոր ֆիլմի երաժշտութեան մէջ առանձնատուկ տեղ կը զբաղեցնէ «Նուան գոյնը» ֆիլմին երաժշտութիւնը: Այս ֆիլմին մէջ երաժշտահանը յայտնաբերած է նկարին համապատասխան երանգներ:

Ֆիլմի մէջ բեմադրիչին ամենամեծ գինակիցը տեսախցիկը վարողն է է: Բայց «Նուան գոյնը» ֆիլմին մէջ, ուր երկխօսութիւն չկայ, ու խօսքը հիւլէի նման աննշան է, երաժշտութիւնն ու ձայնը պէտք է վճռական ըլլային: Այդ իսկ պատճառով երաժշտահանը նոյնպէս դարձած է բեմադրիչին, այս պարագային՝ Սերկէյ Փարաճանովի մերձաւորագոյն գինակիցը:

«Կտոր մը երկինք» ֆիլմին մէջ, իմաստային առումով, հարազատ շերտ մը կայ բոլորիս համար: Սա թոթովեցի աշխարհն է, ազգային բնաւորութիւններու ներկայութիւնը՝ դրուած պայմանական աշխարհի սահմաններուն մէջ, որ մեզի համար թանկ է եւ հասկանալի: Այս ֆիլմը արժանացած է նաեւ բազում մրցանակներու, որոնցից Վիլնիւսի մէջ կայացած համամիութենական 14-րդ ֆիլմի փառատօնին «Լաւագոյն երաժշտական լուծման համար» սահմանուած մրցանակը շնորհուած է Տիգրան Մանսուրեանին:

Մանսուրեանը գրած է երաժշտութիւն նաեւ «Լիրիկական երթ», «Գիբորը», «Մօր սիրտը»

Սեր Բոլորին «Անուն» Աննօ Բաբաջանեանի առաջին ստեղծագործութիւնը՝ դաշնամուրի համար նուագախումբի հետ համանուագը, Մոսկուայի մէջ կատարուեցաւ 1944-ին, երբ հեղինակը ընդամէնը 23 տարեկան էր եւ դեռ կ'ուսանէր երջտանոցը: Ինչպէս կը խոստովանի ինք՝ երաժշտահանը, ան իր վրայ կրած է Սերկէյ Ռախմանինովի եւ Արամ Խաչատրեանի ազդեցութիւնը: Երաժշտահանը իր ստեղծագործութիւններուն մէջ հայկական ազգային գոյնը զուգակցած է ժամանակակից մեղեդայնութեան հետ:

«Երբ ստեղծագործող ըսելիք ունի, ստեղծագործութեան մէջ միտք, բովանդակութիւն կայ, եւ ընտրուած միջոցները կը համապատասխանեն բովանդակութեան, երբ միտքն ու միջոցները համարժէք են, այդ ժամանակ գեղարուեստական արդիւնք անպայման պիտի ըլլայ: Իսկ երբ ստեղծագործութեան գաղափարը, միտքը քուկդ է, բայց դուն գայն «կը զգեստաւորես» ուրիշին միջոցներով, թէկուզ եւ անոնք յոյժ ժամանակակից ըլլան, ոչինչ կը յաջողի: Այդ նոյնն է, թէ մարդ ուրիշին հագուստը հագնի: Երբ արտայայտչամիջոցները քու սեփականդ չեն, փոխ առած ես այս կամ այն երաժշտահանէն, կը ստացուի խայտաբղէտ, տարած մի բան: Ըստ ինձի՝ նման ստեղծագործութիւնը դժուար թէ կարենայ մէկը համոզել, առաւել եւս՝ յուզել», ըսած է Աննօ Բաբաջանեան:

Անոր երաժշտութիւնը կը հմայէ իր քնարականութեամբ, վեհ ումանթիզմով, տարերային հզօր յուզականութեամբ: Որպէս իսկական գեղագէտ՝ Բաբաջանեան կը տիրապետէր ժողովրդական երաժշտութեան ներքին աշխարհը թափանցելու արուեստին:

«Տաղանդաւոր երաժշտահան, հմուտ դաշնակահար Աննօ Բաբաջանեանը միաժամանակ երգի անզուգական վարպետ է, եւ անոր ստեղծած երգերէն շատերը, իր ստեղծած միւս գործերուն նման, կը ճախրեն աշխարհով մէկ՝ աշխարհի շատ ժողովուրդներուն տանելով վերածնուած հայ ժողովուրդի երգն ու երաժշտութիւնը», ըսած է Աննօ Բաբաջանեանի լաւագոյն ընկեր Գէորգ Էմինը:

Աննօ Բաբաջանեանը գրած է երաժշտութիւն «Պաղտասարը կ'ամուսնանայ», «Մրցոյթին մէջ միայն խոհարարներն են», «Հարսնացուն հիւսիսէն», «Սանամէր» եւ այլ գեղարուեստական ֆիլմերու համար: Անոր համար աշխարհի մէջ չկար թէկուզ մէկ երաժշտահան, որ աշխատէր կարգով՝ սկիզբը կա՛մ շարադրանքը, կա՛մ մեղեդին: «Իմ հետ սովորաբար այսպէս կը պատահի. յանկարծ կը յայտնուի մեղեդին՝ որպէս վաղուց սպասուած հիւր, որ չես գիտեր՝ ուր նստեցնես, ինչ հիւրասիրես: Կը խառնուիս իրար, իսկ ան կ'անհետանայ: Կը ստուգես՝ արդեօ՞ք այդքան լաւ է: Երբ կը համոզուիս, որ լաւ է, կը հրաւիրես բանաստեղծը: Եւ ամէն ինչ դարձեալ կը սկսի»:

«Մանչեսթր Սիթի» Յաղթեց Եւ Բարձրացաւ Առաջին Տեղ

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 9-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթր Սիթի» իր դաշտին վրայ մրցեցաւ «Պրայթըն» հետ եւ յաղթեց 2:1 արդիւնքով:

«Մանչեսթր Սիթի» 21 կէտով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը, «Պրայթըն» 7-րդն է՝ 16 կէտ:

«Նիուքասլ Եունայթըտ»ը ընդունեց Լոնտոնի «Քրիսթալ Փելասին» եւ յաղթեց 4:0 արդիւնքով:

«Նիուքասլը» 16 կէտով 5-րդն է, «Քրիսթալ Փելասը» 10-րդ տեղն է՝ 12 կէտ:

«Չելսին» Ու «Արսենալը» Հաւասար



Անգլիոյ Փրեմիեր Լիգայի 9-րդ հանգրուանին փոխախոյեան «Արսենալը» հիւրընկալեց «Չելսին» եւ պարտութենէն խուսափեցաւ վերջաւորութեան կատարուած կոլերու շնորհիւ՝ 2:2:

«Չելսի»էն աչքի ինկան անգլիացի կիսապաշտպան Քոուլ Պալմերը եւ ուքրանացի կիսապաշտպան Միխայիլ Մուտրիկը:

«Արսենալ»էն մրցակիցի բերդը գրաւեցին անգլիացի կիսապաշտպան Տեքլան Ռայան ու պեյճիքացի յարձակող Լեանտրո Թրոսարտը:

«Արսենալ» 21 կէտով երկրորդն է: Նոյնքան կէտ ունի առաջատար «Մանչեսթր Սիթին»: «Չելսին» 9-րդն է՝ 12 կէտ:

«Լիվերփուլ» Պարտութեան Մատնեց «Էվերթոնին»

Անգլիոյ Պրեմիեր Լիգայի առաջնութեան 9-րդ հանգրուանին «Լիվերփուլ» ընդունեց «Էվերթոնին»: Գերմանացի Եուրգեն Կլոպի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով: Տուպի հեղինակ դարձաւ եգիպտացի յարձակող Մոհամեմ Սալահը:

«Լիվերփուլ» 20 կէտով բարձրացաւ առաջին տեղ: Յաջորդ երկու տեղերը գտնուող եւ մէկական նիւազ կատարած «Թոթենհեմ» ու «Արսենալ» նոյնպէս ունին 20-ական կէտ:

«Մանչեսթր Եունայթըտ» Ուժեղ Էր «Շեֆիլտ Եունայթըտն»

Անգլիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին «Շեֆիլտ Եունայթըտ» ընդունեց «Մանչեսթր Եունայթըտին» եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

«Մանչեսթր Եունայթըտ» 15 կէտով 8-րդն է, «Շեֆիլտ Եունայթըտ» վերջինն է՝ 1 կէտ:

«Ինթեր» Պարտութեան Մատնեց «Թորինոյին»

Իտալիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին Միլանի «Ինթերը» թուրինի մէջ հիւրընկալեց «Թորինոյին»: Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով: Հենրիխ Միխայիլսոնը «Ինթերի» հիմնական կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ հանդիպման: «Ինթերը» 22 կէտով առաջինն է, «Թորինոն» 14-րդ տեղն է՝ 9 կէտ:



ՊՍՏ-Գ խնդիրներ Չունեցաւ՝ 3:0

Ֆրանսայի առաջնութեան 9-րդ հանգրուանին ախոյեան ՊՍՏ-ն ընդունեց «Սթրասպուրկին» եւ յաղթեց 3:0 արդիւնքով:

ՊՍՏ-ի կոլերը նշանակեցին ֆրանսացի յարձակող Կիլիան Միսթալէն, սպանացի կիսապաշտպաններ Քառլոս Սոլերն ու Ֆապիան Ռուիսը:

ՊՍՏ-ն 18 կէտով առաջինն է, «Սթրասպուրկը» 12-րդն է՝ 10 կէտ:

86 Տարեկանին Մահացած Է Աշխարհի Ախոյեան Պոպի Չարլթոնը



86 տարեկանին մահացած է Անգլիոյ հաւաքականի եւ «Մանչեսթր Եունայթըտի» նշանաւոր ֆուլթպուլիստ, աշխարհի ախոյեան Պոպի Չարլթոնը:

Պոպի Չարլթոնը 1966-ին Անգլիոյ հաւաքականի հետ դարձած է աշխարհի ախոյեան, 1968-ին «Մանչեսթր Եունայթըտի» հետ նուաճած է եւրոպական Ախոյեաններու գաւաթը:

Աշխարհի Ամենասուղ Յարձակողներու Տասնեակը

Transfermarkt-ը ներկայացուցած է աշխարհի ամենասուղ յարձակողներու տասնեակը:

Էրլինգ Հոլանտ («Մանչեսթր Սիթի», 180 միլիոն եւրո)

Կիլիան Միսթալէ (ՊՍՏ, 180 միլիոն եւրո)

Վինիսիուս ժունիոր («Ռեալ Մատրիտ», 150 միլիոն եւրո)

Պուկայո Սակա («Արսենալ», 120 միլիոն եւրո)

Վիկթոր Օսիմէն («Նափոլի», 120 միլիոն եւրո)

Ֆիլիփ Ֆոսթեն («Մանչեսթր Սիթի», 110 միլիոն եւրո)

Հարի Քեյն («Պայրըն», 110 միլիոն եւրո)

Ռոտրիկո Կոէս («Ռեալ Մատրիտ», 100 միլիոն եւրո)

Լաուտարո Մարթինես («Ինթեր», 100 միլիոն եւրո)

Ռաֆայէլ Լեաու («Միլան», 90 միլիոն եւրո)

HIGHEST-PAID PLAYERS 2023	
	SALARY PER YEAR
1	RONALDO €200M
2	MESSI €135M
3	NEYMAR €112M
4	MBAPPÉ €110M
5	BENZEMA €106M
6	HAALAND €58M
7	SALAH €53M
8	MANÉ €52M
9	DE BRUYNE €39M
10	KANE €36M
11	LEWANDOWSKI €34M

«Պարսելոնայի» Յաղթանակը

Սպանիայի առաջնութեան 10-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» ընդունեց Պիլպայոյի «Աթլէթիքին»: Սպանացի Չաւիի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 1:0 արդիւնքով:

80-րդ վայրկեանին փորթուկալացի յարձակող Ժոաու Ֆելիշի փոխանցումէն յետոյ աչքի ինկաւ 17-ամեայ սպանացի յարձակող Մարք Գիլոն, որ նորամուտը նշեց գաթալոնական ակումբի գլխաւոր խումբին մէջ: Ան մրցակիցի բերդը գրաւեց փոխարինման դուրս գալէ 20 վայրկեան յետոյ:

«Պարսելոնան» 24 կէտով երրորդն է, «Աթլէտիկը» 6-րդ տեղն է՝ 17 կէտ: Առաջատարներ «Ռեալն» ու «Թիրոնան» ունին 25-ական կէտ:

«Ռեալը» Չյաղթեց «Սելիլիային»

Սպանիոյ առաջնութեան 10-րդ հանգրուանին «Սելիլիան» ընդունեց Մատրիտի «Ռեալին»: Արձանագրուեցաւ 1:1 հաւասար արդիւնք:

74-րդ վայրկեանին սեփական բերդը գրաւեց Արքայական խումբի ակտիւրի պաշտպան Տաւրո Ալպան: «Ռեալ» խուսափեցաւ պարտութենէն՝ Տանիէլ Կարվախալի կոլի շնորհիւ:

«Ռեալ» 25 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, «Սելիլիան» 13-րդն է՝ 9 կէտ:

«Ինթեր Մայամին» Սեսիի Հետ Պարտուեցաւ Սրցաշրջանի Վերջին Խաղին

«Ինթեր Մայամին» պարտութիւնով աւարտեց ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութիւնը: Վերջին խաղին «Ինթեր Մայամին» հիւրընկալեց «Շառլոթին» ու պարտուեցաւ 1:0 արդիւնքով:

«Ինթեր Մայամի» արժանիքիցի յարձակող Լիոնել Մեսին ու սպանացի կիսապաշտպան Սերխի Պուսկետսն խաղցան ամբողջ հանդիպման: Սպանացի պաշտպան Ժորտի Ալպան դաշտ մտաւ 67-րդ վայրկեանին:

«Ինթեր Մայամին» 34 խաղերու ընթացքին վաստակեցաւ 34 կէտ եւ Արեւելեան Քոնֆերանսի մէջ գրաւեց 14-րդ տեղը՝ չնուաճելով փլեյ-օֆֆի ուղեգիր: